

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՈՒՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԹՈՒՐԹԻՈՅ

- Հրաժարիլ՝ յարաբերու-  
թիւններու կարգաւորման համար  
պահանջելէ Լեւոնային Ղարաբաղի  
հակամարտութեան անյապաղ լու-  
ծումը եւ Ատրպէյճանի գրաւեալ  
տարածքներէն հայկական ուժերու  
հեռացումը: Փնտռել ուղիներ՝ Պաք-  
ուին ցոյց տալու համար, որ Երե-  
ւանի, շրջափակման մտավախու-  
թիւնները փարատելով, կարգա-  
ւորուած թուրք-հայկական յարա-  
բերութիւնները կ'արագացնեն հա-  
յերու ետ քաշուիլը գրաւեալ տա-  
րածքներէն:

- Հայաստանի նկատմամբ բա-  
րի կամքի քայլեր անել, օրինակ,  
Անի քաղաքի աւերակները պահ-  
պանելու ուղղութեամբ առաջար-  
կել միատեղ աշխատիլ, յստակ  
յայտարարելով, որ թուրքիան կը  
ճանչնայ եւ կը պահպանէ հայկա-  
կան պատմական եւ կրօնական ժա-  
ռանգութիւնը ամբողջ երկրի տա-  
րածքին:

- Համալսարաններուն եւ  
հիմնարկներուն քաջալերել աւելի  
ընդգրկուած հետազոտութիւններ  
կատարել 1915-ի դէպքերու վերա-  
բերեալ, նախընտրելի է, հայ եւ  
երրորդ երկիրներու գիտնականնե-  
րու մասնակցութեամբ, արդիակա-  
նացնել պատմութեան դասագրքե-  
րը եւ վերացնել կանխակալ մօտե-  
ցումները:

Շաբ.ք էջ 4

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԽԱԲՈՒԱԾԻ ՎԻՃԱԿԻՆ ՄԵՋ ԹՈՒՐԹԻԱ ԿԸ ԿԱՐԾՐԱՑՆԵ ԻՐ ԴԻՐՔԸ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԳԾՈՎ

Հայաստանի գործող նախագահ  
Սերժ Սարգսեանի նախաձեռնած՝  
թուրքիոյ հետ «ֆուլթայլային» քա-  
ղաքականութիւնը հասած է ձախո-  
ղութեան եզրին: Հայ-թրքական սահ-  
մանի բացման հետ յոյսեր կապող-  
ները անգամ մը եւս մատնուեցան  
յուսախաբուութեան:

Միացեալ Նահանգներու նա-  
խագահ Պարաք Օպամայի այցելու-  
թենէն իրենց քաղելիքը քաղելէ ետք,  
թուրքիոյ ղեկավարները վերա-  
դարձան իրենց նախկին պայման-  
ներուն եւ երկրի բարձրագոյն ղեկա-  
վարութեան բերանով եկան յայտա-  
րարելու թէ, «նախ պէտք է լուծուի  
Ղարաբաղի հարցը»:

Սերժ Սարգսեան, իր «պաշտօ-  
նավարութեան» առաջին տարե-  
դարձին առթիւ իր ունեցած ելոյց-  
թին մէջ ստիպուած եղաւ ընդունե-  
լու, որ ինք պատի առջեւ է, ըսելով  
թէ, «գնդակը այժմ թուրքիոյ դաշ-  
տին մէջ է»:

«Կովկասի մէջ ամենահիմնա-  
կան խնդիրը Ղարաբաղի հարցն է  
Հայաստանի ու Ատրպէյճանի մի-  
ջեւ», Financial Times թերթին  
տուած հարցազրոյցին մէջ ըսած է  
թուրքիոյ նախագահ Ապտուլա Կիլ:

«Մենք կը փափաքինք, որ այս  
խնդիրը լուծուի, ինչ որ նոր  
միջնորդող կը ստեղծէ Կովկասի մէջ,  
որովհետեւ այդ յարաբերականորէն  
փոքր տարածքը Արեւմուտքի ու  
Արեւելքի միջեւ, կրնայ կամ պատ  
դառնալ, կամ՝ դարպաս», - աւել-  
ցուցած է թուրքիայի նախագահը:

Աբդուլլա Կիլի օրինակին  
հետեւեցաւ վարչապետ Ռեջէփ  
Էրդողան, բացառելով Հայաստանի

հետ իր երկրի յարաբերութիւննե-  
րու կարգաւորմանը միտուած հա-  
մաձայնագրի ստորագրումը, քանի  
դեռ լուծուած չէ Լեւոնային Ղարա-  
բաղի հակամարտութիւնը:

«Մենք Հայաստանի հետ վերջ-  
նական համաձայնագիր չենք կնքեր,  
մինչեւ Ատրպէյճանի եւ Հայաստա-  
նի միջեւ համաձայնութիւն չըլլայ  
Լեւոնային Ղարաբաղի հարցով», -  
ըսած է Էրդողան:

Պաշտօնավարութեան առաջին  
տարին աւարտելու առթիւ, լրագ-  
րողներու հետ իր հանդիպումի ըն-  
թացքին Սերժ Սարգսեան ինք եւս  
կասկածներ յայտնեց հայ-թրքա-  
կան յարաբերութիւններու շուտա-  
փոյթ կարգաւորման կարելիու-  
թեան վերաբերեալ: «Հիմա, իմ  
կարծիքով, գնդակը գտնուած է  
թուրքիայի դաշտում, եւ եթէ խօ-  
սում ենք ֆուլթայլային դիւանա-  
գիտութեան մասին, պէտք է ասենք,  
որ գնդակը յարատեւ չի կարող մի  
դաշտում գտնուել»:

Պատասխանելով այն հարցին,  
թէ հայ-թրքական յարաբերութիւն-  
ներու կարգաւորման նպատակով  
ի՞նչ փոխզիջումներ կրնայ կատա-  
րել Հայաստանը, Սերժ Սարգսեանը  
յիշեցուց, որ հայկական կողմը պատ-  
րաստ է յարաբերութիւններ սկսիլ  
առանց նախապայմաններու:

Անուղղակի կերպով ընդունե-  
լով, որ ինք կրնայ խաբուած ըլլալ,  
Սերժ Սարգսեան եկաւ ըսելու՝ «Հնա-  
րաւոր է արդեօք, որ մենք մեր  
հաշտարկներում սխալուած լինե-  
ինք, եւ հիմա թուրքերը այլ  
դիրքորոշում ընդունեն եւ փորձեն  
նախապայմաններ առաջադրել:  
Իհարկէ, հնարաւոր է: Այդպիսի բան  
չի կարելի 100 տոկոսով բացառել,  
բայց կարծում եմ, որ մենք նոյնիսկ  
այդ պարագայում այդ պրոցէսից  
դուրս կը գանք աւելի ուժեղացած»:

Սերժ Սարգսեանի կարծիքով  
հայ-թրքական բանակցութիւննե-  
րու ձախողութեան պարագային իսկ,  
Հայաստանը այս գործընթացին կը  
շահի: «Մենք այս պրոցէսով մէկ  
անգամ եւս ընդգծեցինք, եւ միջազ-  
գային հանրութիւնը դրա վկան  
եղաւ, որ մենք իրօք պատրաստ ենք  
առանց նախապայմանների յարա-  
բերութիւններ հաստատել»:

Հայ-թրքական սահմանի բաց-  
ման ժամկէտներու վերաբերեալ  
Սարգսեան ըսաւ. - «Ես մտածում  
եմ, որ Հայաստան - թուրքիա  
յաջորդ ֆուլթայլային խաղի ժա-  
մանակ ես կամ կ'անցնեմ բաց սահ-  
մաններով, կամ էլ կը լինենք դրա  
նախօրեակին: Բայց հնարաւոր է, որ  
իմ լաւատեսութիւնը չարդարա-  
նայ: Մենք սրանից չենք տուժելու»:

## ԿԼԵՆՏԵԼԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻ

Աւարտեցան Կլէնտէլի Բաղաճապետական ընտրութիւնները ու  
Բաղաճապետական ընտրութիւնները ըսաւ իր խօսքը:

Անգամ մը եւս, Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները  
սովորական Բաղաճապետական ընտրութիւնները վերածեցին ի գին աւելն  
ինչի առաւելութեան հասնելու պայմանին: Իրենց այդ ու ձախ կատարած  
յարձակումներով, խեղաթիւրումներով ու անպատասխանատու  
յայտարարութիւններով անտեղի լարուածութիւնը յառաջացուցին, ոչ միայն  
ներկայական կեանքին ներս, այլ նաեւ ոչ հայերու մօտ:

Տիրապետական հայրապետական Զանգու Արմէնեան շարաքներ  
շարունակ մեր կազմակերպութեան հասցէին իր կատարած  
խօսքով հանդիմանեց, ընտրութիւններու մաթօրեակին եկաւ հեռատեսիլի  
վրայ յայտարարելով թէ՛ «Հնչակեանները դաւաճաններ են»:

Ըստ երեւոյթի, մեր հերոսին անհանգիստ ընող պարագան Հայ  
Ամերիկեան Խորհուրդի՝ հայագրի երկու թեկնածուներու՝ Շահէ  
Քէօրդիլեանի եւ Վարդան Կարապետեանի կողմէն Ֆրանսիայի Բարձրագոյն  
թեկնածութիւնը պաշտպանած ըլլալն էր: Քիմքերոյի կերպարը մրտադրու  
իրենց մոլորցիւն մէջ, հայադատականներ Զանգու Արմէնեան եւ Զարեհ  
Սիւնեան՝ անոր հասարակական վայրերու մէջ ծխելը արգելող եւ  
»Խորովածի« օրենքներուն կողմէն Բաղաճապետական ընտրութիւնը  
հակահայ կեցումով, առաջին հերթին վիրաւորելով հայ գիտակից  
ընտրողի իմացութիւնը:

Զանգու Արմէնեաններուն կու գամք ըսելու թէ, հայ համայնքի  
ագգային զգացումները անտեղի շահարկելն ու խտրականութիւն  
սերմանելը՝ ի շահ մեղ Բաղաճապետական նպատակներու չափանց  
վտանգավոր խաղ է, որ ոչ միայն ուղղակիօրէն կը վնասէ հայ համայնքի  
շահներուն այլ ոչ հայ Բաղաճապետականներու մօտ անտեղի հակահայ  
տրամադրութիւններ կը ստեղծէ:

Այս առթիւ կոչ կ'ընենք մեր հայրենակիցներուն գոհ չերթալ նման  
աժան եւ ամբոխավարական գործելակերպի, որ բացի վնասէն ուրիշ  
ոչինչ կրնայ բերել մեր համայնքին համար: Կը հաւատանք, որ թեկնածուի  
մը արժանիքները, գաղափարներն ու ծրագիրները շատ աւելի կարեւոր  
եւ առաջնահերթ են քան ազգային պատկանելիութիւնը:

Կը թելադրենք նաեւ Բաղաճապետական ընտրողներու Գացախեանին,  
որ աշախուրջ ըլլայ եւ հեռու մնայ այս կամ այն հատուածին կողմնակալ  
վերաբերմունքի ցուցաբերելէ եւ միմիայն անաչառ կատարել իր  
վերահսկողի պարտականութիւնները:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԼԵՆՏԵԼԻ ՄԱՍՆԱՃԻՂ


## 20-ԱՄԵԱՅ ՀԱՅԿ ՕՐԱՆԵԱՆ ԱԲԱԶԱԿՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԶՈՐ

Շաբաթ, Ապրիլ 11-ին եր-  
կու հայ երիտասարդներ աւագակ-  
ներու կողմէ դանակահարման են-  
թարկուելով, անոնցմէ մին՝ 20-  
ամեայ Հայկ Օհանեան մահացած է,  
իսկ երկրորդը, որու ինքնութիւնը  
կը մնայ անձանօթ, վիրաւոր,  
սակայն փրկուած է:

Արդարեւ, Կէս գիշերի մօտ,  
«Նորթրիփ» Համալսարանի մօտ,  
երկու երիտասարդները դուրս  
գալով տարեդարձի հաւաքոյթէ մը,  
ուղղուած են իրենց ինքնաշարժը:  
Այդ պահուն իրենց մօտեցած են  
երեք սափրուած գլուխով անձիք,  
որոնք փորձած են կողոպտել երի-  
տասարդները ու խլել անոնց  
ինքնաշարժը: Յաջորդող վիճա-  
բանութեան ընթացքին աւագակ-  
ները դանակով հարուածած են  
Հայկի վզին ու ան տեղուցն վրայ  
կորսնցուցած է իր ուշքը:

Հայ երիտասարդները տեղա-  
փոխուած են մօտակայ հիւանդա-  
նոցներ, ուր Հայկ մահացած է  
գործողութեան ընթացքին:

Ըստ Անճելլաի ոստիկանները  
կը փորձեն ճշգրէլ ոճրագործներու



Ռեքրի գոհ՝ Հայկ Օհանեան

ինքնութիւնը, սակայն առայժմ  
ձերբակալուածներ չկան:

Հայկ Օհանեան անդամ էր  
ՀՄՄ-ի Կլէնտէլի մասնաճիւղի վար-  
չութեան եւ միաժամանակ մաս կը  
կազմէր ՀՄՄ-ի պատրէպոյի խում-  
բին:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՐՏԻ 1-Ի ԹԵՄԱՆ՝ ՈՐՊԷՍ ԱՏԻ ԴԵՏԵԿՏՈՐ

Իր պաշտօնավարման մէկ տարուայ առթիւ Սերժ Սարգսեանը հանդիպել է լրագրողներին հետ եւ, ըստ էութեան, գնահատել իր իսկ մէկ տարուայ գործունէութիւնը: Սերժ Սարգսեանը, մասնաւորապէս, խօսել է տնտեսական ճգնաժամի, հայ-թուրքական յարաբերութիւններին, դարաբաղեան խնդրի եւ այլ թեմաներով: Ընդ որում, թէ որքանով է անկեղծ եղել Սերժ Սարգսեանի խօսքը՝ դժուար է ասել, որովհետեւ, օրինակ, հայ-թուրքական գաղտնի բանակցութիւնների եւ դարաբաղեան գործընթացի մասին հասարակութիւնը բացարձակապէս տեղեկացուած չէ: Փոխարէնը՝ նրա անկեղծութեան մասին կարելի է պատկերացում կազմել 2008թ. Մարտի 1-ի իրադարձութիւնների վերաբերեալ նրա տուած գնահատականներով, որովհետեւ հասարակութիւնը շատ լաւ տեղեկ է, թէ ինչ է տեղի ունեցել իրականում:

Իսկ ի՞նչ է ասել Մարտի 1-ի մասին Սերժ Սարգսեանը: Նախ, նա յայտարարել է, թէ ամբողջովին կիսուած է Մարտի 1-ի դէպքերի հետ կապուած հասարակութեան մտահոգութիւնը, բայց չի կարծում, թէ մեր երկրում կան ապօրինի ձեռքարկուածներ եւ քաղաքատարկեալներ: Հենց միայն այս նախադասութիւնը բաւական է՝ հասկանալու համար, որ Սերժ Սարգսեանն ակնյայտօրէն կեղծում է: Նա, իհարկէ, գիտի, որ ընդդիմութեան ակտիւիստներն առ այսօր բանտերում են հենց իրենց քաղաքական հայեացքների համար, բայց մարդկանց աչքերին

նայելով՝ յայտարարում է, թէ Հայաստանում քաղաքատարկեալներ չկան: Խօսքը նոյնիսկ այն մասին չէ՝ կարողացե՞լ է դատախազութիւնը քաղաքատարկեալների համար «պատշաճ» քրէական յօդուածներ գտնել, թէ ոչ: Եթէ նոյնիսկ կարողացել է, միեւնոյն է՝ դա արել է քաղաքական պատճառներով, հետեւաբար՝ Սերժ Սարգսեանը կեղծում է:

Սա ղեռ ոչինչ: Բայց Սերժ Սարգսեանը կարծիք է յայտնել նաեւ, որ եթէ Մարտի 1-ին ցուցարարները գէնք չկիրառէին, ոստիկանները նոյնպէս գէնք չէին կիրառի: Մի կողմ դնենք էմոցիաները եւ հարցին նայենք զուտ իրաւական տեսանկիւնից: Կա՞ց գոնէ մի փաստ, որն ապացուցում է, որ Մարտի 1-ին ցուցարարները նոյնպէս գէնք են կիրառել: Սերժ Սարգսեանը, ենթադրաբար, այդ օրը դէպքի վայրում չի եղել, եւ չէր կարող անձամբ ակնատես լինել, թէ ինչպէս են ցուցարարները գէնք կիրառում, հետեւաբար՝ կամ նա պիտի այդպիսի տեսագրութիւն նայած լինի, կամ ինչ-որ մէկը պիտի նրան պատմած լինի այդ մասին: Եթէ նման տեսագրութիւն լինէր, հեռուստաընկերութիւնները, հասկանալի է, մի տարի շարունակ ամէն օր կը ցուցադրէին այդ կադրերը: Եթէ չեն արել, ուրեմն այդպիսի կադրեր չկան: Ճիշդ նոյն կերպ էլ հեռուստաընկերութիւններն ամէն օր եթեր կը հեռարձակէին «ականատեսի վկայութիւնները», եթէ հնարաւորութիւն լինէր այդպիսի ակնատես գտնել: Եզրակացութիւնը

միակն է. կամ Սերժ Սարգսեանը պարզապէս ստում է, կամ նախաքննութեան մարմինը պիտի անյապաղ հարցաքննի նրան՝ պարզելու համար, թէ որտեղի՞ց է նրան յայտնի, որ ցուցարարները գէնք են կիրառել:

Անցնենք առաջ: Սերժ Սարգսեանը բացատրել է նաեւ, թէ ինչու առ այսօր ոեւէ ոստիկան պատասխանատուութեան չի ենթարկուել տասը հոգու սպանութեան համար: Ըստ նրա, ոեւէ մէկը չի պնդում, որ իրաւապահները մեղք չունեն, բայց կոնկրետ մարդկանց մեղադրանք առաջադրելու համար ապացոյցներ չկան: Անկե՞ղծ է արդեօք Սերժ Սարգսեանը: Ենթադրենք՝ անկեղծ է, եւ բաւարար ապացոյցներ իսկապէս չկան: Բայց նա միաժամանակ յայտարարել է նաեւ, թէ ոստիկանութիւնը Մարտի 1-ին կիրառել է «մնացորդային գէնք», այսինքն՝ ոստիկանութեանը փոխանցուել են բանակի համար անպիտան գէնքը, զինամթերքն ու յատուկ միջոցները: Մի կողմ թողնենք այն հարցը, թէ ինչո՞ւ են «յատուկ միջոցները» գտնուել բանակի տրամադրութեան տակ: Ոեւէ մէկը չի հաւատում, չէ՞, որ հայկական բանակը պատրաստուած է ինչ-որ իրավիճակում հակառակորդի տանկերի դէմ «Ձերլոմուխա» կիրառել: Բայց ենթադրենք՝ դա էլ է համապատասխանում իրականութեանը: Հարց է ծագում ինչո՞ւ պատասխանատուութեան չեն ենթարկուում նրանք, ովքեր ոստիկանութեանը «մնացորդային գէնք» են փոխանցել: Լաւ, այդ

գէնքը կիրառողները յայտնի չեն, բայց «փոխանցողները» հաստատ յայտնի են: Պատկերացրէք՝ խանութը ժամկէտանց երշիկ է վաճառում, արդիւնքում՝ մարդիկ են մահանում, բայց յայտնի չէ, թէ կոնկրետ որ գործակատարն է վաճառել երշիկը: Յետո՞յ ինչ, չէ՞ որ յայտնի է, թէ ոեւէ մէկը պատասխանատուութեան չի ենթարկուում:

Այս ամէնն ասում ենք՝ ընդամէնը հիմնաւորելու համար, որ Սերժ Սարգսեանն իր պաշտօնավարման մէկ տարուայ առթիւ կազմակերպած առաւելում ակնյայտօրէն կեղծում էր: Այսինքն՝ նա ղեռ չի հասկացել, որ ստի վրայ հիմնուած իշխանութիւնը երկար կեանք ունենալ չի կարող, եւ «սուտը բռնողներին» բացակայութիւնը չի կարող փրկել իրավիճակը: Բայց այս ամէնը մտահոգիչ է նաեւ այլ պատճառով. եթէ Սերժ Սարգսեանն ակնյայտօրէն խեղաթիւրում է իրականութիւնը Մարտի 1-ի հարցում, ի՞նչ երաշխիք կայ, որ չի խաբում նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնների եւ դարաբաղեան կարգաւորման հարցերում: Ընդ որում, խօսքը սեփական ժողովրդին խաբելու մասին է. արտաքին աշխարհին խաբելու համար Սերժ Սարգսեանը ոչ բաւականաչափ ուսուցիչ ունի, ոչ բաւականաչափ հմտութիւն:

Ամէն դէպքում, ափսոս, որ Սերժ Սարգսեանն անդրադարձաւ Մարտի 1-ին: Եթէ երբեք լսած լինէր «ստի ղետեկտոր» կոչուող սարքի մասին, հաստատ չէր անդրադառնալ:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻԲԱՅԼԵԱՆ  
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ ԹԵՐԹԵՐՆ ԵՆ ՄԵՂԱԽՈՐ

Թերթերն են մեղաւոր, որ Հայաստանում ստեղծուել է նման իրավիճակ: Այն բանում, որ ամէն քայլափոխի ոստիկանութիւնը խախտում է մարդու իրաւունքները, որ Շանթ Յարութիւնեանին մի ամբողջ ամիս փակում են հոգեբուժարանում, արգելելով նոյնիսկ թարմ օդ շնչել, որ նախագահի եղբոր որդին պետավտոտեսուչին, ով համարձակուել է իրեն կանգնեցնել, ռազմորկայի է կանչում, որ խոշոր բիզնէսը դուրս է հարկային դաշտից: Անվերջ կարելի է շարունակել, եւ այդ ամէնում, երիցս ճիշդ է Գալուստ Սահակեանը, մեղաւոր են թերթերը, որ գրում են, ինչ մտածում են ու տեսնում: Իրաւապահ մարմինները, որ փաստեր ու ապացոյցներ են պահանջում, քրէական գործեր յարուցելու եւ օրինախախտներին պատժելու համար, չեն հասցնում կարգալի թերթերի բոլոր լուրերը, խճճում են փաստերի մէջ, եւ յանցագործութիւնները մնում են անպատիժ: Իսկ հասարակութիւնը, ամէն օր կարդալով անօրինականութիւնների մասին տեղեկութիւններ, կորցնում է իմունիտետը, դադարելով տարբերել իր համար իրական վտանգը «թերթային» ողջ ազմուկից:

Նա, ով մտածել է նման «ղեմոկրատիա», խելօք մարդ էր: Ըստ էութեան, դա կիսաղեմոկրատիա է, թող է տրուում խօսել վատի մասին, սակայն չկայ ոչ մի լծակ, ուղղելու իրավիճակը:

Թող թերթերը մէկ-երկու ամիս դադարեն գրել իրական կեանքի

Շաբ.ը էջ 4

ՕՐԵՆՔԻ ԱՎՐԱՆԸ

Թուում է, թէ մեր իշխանութիւնը եւ մասնաւորապէս՝ ոստիկանութիւնը ղեռ վերջնականապէս չեն որոշել, թէ ինչ է նշանակում «հասարակական կարգ» եւ ումից պէտք է այն պաշտպանել: Օրինակ, նրանց համար առաջիմ պարզ չէ, թէ երբ եւ ինչպէս է պէտք քայլել Հիւսիսային պողոտայում, որպէսզի դա լինի, այսպէս ասած, «օրինական քայլուածք», ու երբ է այդ քայլուածքը դուրս գալիս օրէնքի սահմաններից: Որպէս օրինակ վերցնենք թէկուզ ինձ. օրերս անցնում էի այդ պողոտայով՝ որեւէ քաղաքական նպատակ չհետապնդելով: Դեռ աւելին՝ յեղափոխական երիտասարդների նկատմամբ առանձնապէս ջերմ զգացմունքներ չունենալով: Եթէ ուզում եք, հակիրճ ասեմ, թէ ինչու. «ժողովրդավարական իդեալներ» ուսնանալու տեսակէտից նրանց մօտ ամէն ինչ կարգին է, իսկ ահա գիտելիքների, կրթութեան ու, առաւել եւս, դաստիարակութեան առումով, մեղմ ասած, ղեռեւս աշխատելու տեղ կա: Բոլոր դէպքերում նրանք ինձ չեն խանգարում՝ ինչ ուզում են, թող վանկարկեն: Քայլում եմ ես, ուրեմն, Հիւսիսային պողոտայով, ու յանկարծ գետնի տակից «բուսնում են» հակառակ ճամբարի երիտասարդներ, որոնց ես աւելի քիչ եմ հաւանում, որովհետեւ զլխներին կարմիր բերետներ կան: Եւ այդ տղաները սկսում են ինձ բացատրել՝ «էստեղ չի կարելի», «էն կողմ գնա», «էնդեղով անցի»: Նորից եմ ասում՝ մի հատ կողմնորոշուէք՝ կա՞ն արդեօք մեր մայրաքաղաքում անցորդների համար ինչ-ինչ արգելուած գոտիներ, ու ինչպէս եւ երբ են դրանք առաջանում:

Բայց եկէք զուտ տեսականօրէն ենթադրենք, որ ոստիկանների գործողութիւններն օրինական են: Եթէ այդպէս է, եթէ ոստիկաններն ամաչելու բան չունեն եւ պարտաւոր են բռնութիւն կիրառել զբօսանքի դուրս եկած մարդկանց հանդէպ, ապա ինչո՞ւ են նրանք խոչընդոտում այդ «փայլուն օպերացիաների» նկարահանմանը՝ յարձակուելով լրագրողների վրայ:

10 տարի առաջ ես ընկերոջս հետ Լոնդոնում պատահաբար յայտնուել էի Դաունինգ սթրիթ 10-ի մօտակայքում: Վարչապետի նստավայրից մի 10 մետր հեռաւորութեան վրայ ասիական արտաքինով մօտ 20-30 երիտասարդներ ինչ-որ բանի դէմ բողոքում էին՝ անյայտ լեզուով կարգախօսներ վանկարկելով: Երբ երիտասարդներն անցան որոշակի գծած սահմանը, ոստիկանները նրանց բաւականին կոպիտ ձեւով հետ վերադարձրին՝ ուշադրութիւն չդարձնելով այդ ամէնը նկարահանող տեսախցիկներին, նաեւ՝ մեր ֆոտոխցիկներին: Աւելի ճիշդ, նրանք աչքի պոչով տեսնում էին տեսախցիկները, եւ դրանց առկայութիւնը, իմ տպաւորութեամբ, ստիպում էր ոստիկաններին արագ վերադառնալ «Վանասեր» լինել: Երբ միջադէպն աւարտուեց, մօտեցանք ոստիկաններին, ներկայացանք ու խնդրեցինք մեզ հետ լուսանկարուել: «Օ, journalists», - ժպտացին երկու մետրանոց տղաները ու իսկոյն նկարահանուելու համար դիրք ընդունեցին: Բրիտանացի ցանկացած ոստիկան գիտի, որ լրագրողը կոնֆլիկտի կողմ չի՝ նա իրադարձութիւնը արձանագրողն է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ  
«ԱՌԱՒՕՏ»

**Մասիս**  
 ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՏՕԲԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ  
 ԿԱԶՂԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
 Ղեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797- 6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 MASSIS Weekly  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆ. «ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ ԱԿՏԻՈՒԹԻՒՆՆ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լևոն Զուրաբեանը լրագրողների հետ հանդիպմանը, խօսելով Երեւանի աւագանու ընտրութիւնների մասին, ասաց, որ իրենց նպատակը «Ժողովրդի առաւել ակտիւացմանը հասնելն է»:



Հայ Ազգային Կոնգրեսի համակարգող Լևոն Զուրաբեան

«Ժողովրդի մէջ դեռ ինչ-որ ապատիւ կայ, դեռ կայ ինչ-որ հիասթափուած վիճակ, որ գնում են, իրենց ձայնը տալիս են, բայց յետոյ ընտրութիւնները կեղծուած են: Ստեղծուած է մի վտանգաւոր իրավիճակ, որ մարդիկ ուղղակի չգնան քուէարկելու», - ասաց Զուրաբեանը՝ այդուհանդերձ, չաւելելով. - «Բայց կարծում եմ, որ արդէն Տէր-Պետրոսեանի առաջադրումը եւ ցուցակի մէջ առաջինը լինելը կոտորել է այդ միջոցը: Մարդիկ հասկացան, որ մենք շատ վճռակամօրէն ենք տրամադրուած: Մենք արդէն գտնւում ենք այդ աշխուժացումը, մոբիլիզացիան: Յաջողութեան բանալին ակտիւութիւնն է»:

Հայ ազգային կոնգրեսի տուեալներով, գալիք ընտրութիւններում իրենք ակնյայտ առաւելութիւն ունեն միւս քաղաքական ուժերի նկատմամբ:

«Խօսքը ջախջախիչ յաղթանակի մասին է՝ եթէ տեղի ունենային ազատ եւ արդար ընտրութիւններ», - յստակեցրեց Լևոն

Զուրաբեանը: - «Սակայն ինդիւրը հենց այն է, որ մենք գիտենք, որ այս իշխանութիւնները ունակ են ամենալայնամասշտաբ կեղծիքներ, ուստի ինդիւրը մենք ձեւակերպում ենք հետեւեալ կերպ՝ ինչպէս պէտք է այս ընտրակեղծիքների դէմը առնել»:

ՀԱԿ-ը դիմել է կենտրոնական ընտրական յանձնաժողով՝ ստանալու համար ընտրողների ցուցակը: «Այս պահին մենք արդէն ունենք տուեալներ, որ այդ ընտրողների ցուցակը 8 հազարով աւելի է, քան ընտրողների ցուցակը նախագահական ընտրութիւնների ժամանակ Երեւանում», - յայտարարեց Զուրաբեանը՝ շարունակելով, որ այդ յաւելումների դիմումները ցուց կը տայ, թէ «ինչ մասշտաբի ընտրակեղծիքների են պատրաստուած իշխանութիւնները»:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԽՈՒԶԱՐԿՈՒԵԼ ԵՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ապրիլ 12-ի առաւօտեան Յատուկ քննչական ծառայութեան աշխատակիցները խուզարկել են «Մարտի 1»-ի գործով հետախուզման մէջ գտնուող՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի ընկերոջ՝ Արամազդ Ղալամբարեանի բնակարանը:



Ընդատակեայ գտնուող «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեան

«Առաւօտեան 8:30 դուռը թակեցին, ներկայացան, որ ոստիկանութիւնից են, դուռը բացեցի, եկան 6-7 հոգի: Խուզարկութեան իրաւունք ունէին, դատարանի որոշում կար, ներկայացրեցին, կարդացի, նորմալ էր: Խուզարկութիւն կատարեցին, առգրաւեցին, ժամանակաւորապէս տարան համակարգիչս, տեսախցիկը, լուսանկարչական ապարատը, սկաւառակներ, տարբեր տեսակի ինֆորմացիոն կրիչներ եւ թղթեր», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախօսազրոյցում պատմեց Արամազդ Ղալամբարեանը:

Նա ենթադրում է, որ իր միջոցով Յատուկ քննչական ծառայութեան աշխատակիցները փորձում են գտնել Փաշինեանին: «Իրենք դիմել էին դատարանին, դատարանը որոշում էր կայացրել, որ դիմումը հիմնաւորուած է, այսինքն՝ կապը Նիկոլ Փաշինեանի հետ՝ իրենք փնտրում էին այդ կապի ինչ-որ ապացոյցներ, ու իրենք եկել էին այդ սանկցիան իրենց ձեռքին: Նորմալ խուզար-

կութիւն արեցին, նորմալ ընդունեցինք, ճանապարհեցինք, բայց ինձ իրենց հետ տարան Յատուկ քննչական ծառայութիւն, մի որոշ ժամանակ բանաւոր ուղղակի խօսակցութիւն է եղել, որից յետոյ ծանուցագիր տուեցին, որպէսզի ամսի 17-ին ներկայանամ հարցաքննութեան», - ասաց Ղալամբարեանը՝ յաւելելով, որ հարցաքննութեան ներկայանալու է փաստաբանի հետ միասին:

Ինչպէս տեղեկացրել են Հայ ազգային կոնգրեսի կենտրոնական գրասենեակից, որ Յատուկ քննչական ծառայութեան աշխատակիցները առաւօտեան խուզարկութիւն են իրականացրել նաեւ կարօ Սիմիդեանի բնակարանում, ում որդին Փաշինեանի ընկերն է: Ըստ նոյն աղբիւրի՝ Սիմիդեանի համակարգիչը եւս առգրաւուել է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ. «ԱՅՍ ԱՄԲՈՂԸ ՓՈՒԶԻԿ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Գրեթէ չորս ամիս նախապատրաստական աշխատանքներ տանելուց, մեղադրանքներ փոխելուց եւ վերացնելուց յետոյ, կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանը վերջապէս անցաւ Ալեքսանդր Արզումանեանի եւ Սուրէն Սիրունեանի մասով քրէական գործի դատաքննութեան փուլին:



Քաղաքական բանտարկեալ Ալեքսանդր Արզումանեան

Մեղադրողներն ընթերցեցին մեղադրական եզրակացութեան եզրափակիչ մասը, որը Ալեքսանդր Արզումանեանի շահերի պաշտպան Լիպարիտ Սիմոնեանի գնահատմամբ «7-ի գործով» հնչեցուած եզրակացութիւնից « ըստ էութեան, չէր տարբերուած »:

Ալեքսանդր Արզումանեանը եւ Սուրէն Սիրունեանը իրենց մեղաւոր չճանաչեցին, յայտարարելով, որ սա «չինձու, նկարած, իրականութեանը չհամապատասխանող» գործ է:

«Իրենք, որ այս մեղադրական եզրակացութիւնը կազմել էին, դեռեւս գործերը մասնատուած չէին, բայց փաստացի՝ այսօր մեղադրական եզրակացութիւնը չի համապատասխանում իրական իրավիճակին ոչ միայն բովանդակային առումով, որին դեռ գնահատական կը տրուի, այլ գուտ տեխնիկական», - նշեց Սիմոնեանը:

«Ընդամէնը, որ պարզ լինի, որ այս ամբողջ փուլիկ է, ձեզ մի փաստ ասեմ: Ես Մարտի 1-ին չեմ եղել Միասնիկեանի հրապարակում մինչեւ ժամը 21-ը: Այսինքն, այն ինչ կարողւմ էին, որեւէ առնչութիւն չի կարող ունենալ այն մարդու հետ, որը առաւօտից չի եղել այդ տեղում, որտեղ, ըստ իրենց, զանգուածային անկարգութիւններ են կազմակերպուել, եւ դա ապացուցում են հենց իրենց, այսպէս կոչուած՝ հիմնաւորումները», - յայտարարեց Ալեքսանդր Արզումանեանը:

«Ըստ մեղադրական եզրակացութեան, կա [զանգուածային անկարգութիւններ կազմակերպող] խումբը, բայց փաստացի՝ դատարանի որոշմանը հետեւելով այդ խումբը բացառուած է», - մեկնաբանեց Ալեքսանդր Արզումանեանի շահերի պաշտպանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՎԱԽԵՆՈՒՄ Է ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻՑ

Հելսինկիի քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակը յայտարարութիւն է տարածել, որում դիմում է ՀՀ դատախազութիւն՝ պահանջելով քրէական գործ յարուցել «Գագիկ Ծառուկեանի կողմից հիմնադրուած եւ յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտների օրինականացման նպատակ հետապնդող գործունէութեան կապակցութեամբ»:

է ընդունել Ալավերդի եւ Մղարթ գիւղի մօտ 50 բնակիչների: Աշխատանքի ընդունելուց յետոյ ընկերութիւնն աշխատակիցներին աշխատավարձեր չի վճարել, այնուհետեւ մօտ 6 ամիս անց հաւաքել է վերջիններիս հետ կնքած աշխատանքային պայմանագրերը եւ այլեւս չի վերադարձրել: Աշխատակիցների խօսքերով՝ «Ձի էմ Մաղարօ» ՓԲԸ-ն նշուած ամիսների ընթացքում որեւէ գործունէութիւն չի ծաւալել:

«Արդէն 5 ամիս է անցել, ինչ մեր կազմակերպութիւնը պաշտօնական 3 գրութեամբ դիմել է ՀՀ կառավարութեանը՝ ԱԺ պատգամաւոր Գագիկ Ծառուկեանի կողմից հիմնադրուած «Ձի էմ Մաղարօ» ՓԲԸ-ի նախկին աշխատակիցների աշխատանքային իրաւունքների պաշտպանութեանն անջակցելու հարցով: Սակայն մինչ օրս կազմակերպութիւնը ՀՀ կառավարութիւնից ոչ մի արձագանք չի ստացել:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանի կողմից կոռուպցիայի դէմ պայքարի գործում դրսեւորած անհետեւողականութիւնը պայմանաւորուած է Ազգային ժողովի պատգամաւոր Գագիկ Ծառուկեանի նկատմամբ վերջինիս մօտ առկայ վախի հանգամանքով:

2006թ. Գագիկ Ծառուկեանի կողմից Երեւանում հիմնադրուել է «Ձի էմ Մաղարօ» ՓԲԸ-ն, որը թումանեանի շրջանում զբաղուել է ոսկու արդիւնաբերութեամբ եւ 2007թ. Մարտի 1-ից աշխատանքի

ՀԱԿ-Ը ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԶԲՕՍՆԵԼ ՀԻՄՆԱՍՏԻՆ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ

Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենեակի կողմից տարածած հաղորդագրութիւնում, կոնգրեսը նշում է, որ «ահա քանի օր է, ինչ Երեւանի փողոցներում տեղի են ունենում բացայայտ ապօրինութիւններ»:

ԱՄԵՆԱՄԵԾ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

Արհմիութիւնների համընդհանուր կոնֆեդերացիան հրապարակել է տուեալ, ըստ որի ԱՊՀ երկրներից գործազրկութեան ամենամեծ տոկոսը բաժին է հասնում Հայաստանին՝ 6,5 տոկոս 2009 թ. Յունուարի տուեալով: Այս մասին տեղեկացնում է Ռեզնուումը: Գործազրկութեան ամենացածր մակարդակն առկայ է Ղազախստանում եւ Բելառուսում, որտեղ այն չի հասնում 1 տոկոսի: Ռուսաստանում գործազրկութիւնը հասնում է տնտեսապէս ակտիւ բնակչութեան 2,3 տոկոսի, Ադրբեջանում՝ 1 տոկոսի:

«Քաղաքի կենտրոնում ոստիկանական ստորաբաժանումները կոպտօրէն խախտում են մարդկանց ազատ տեղաշարժուելու եւ Հիւսիսային պողոտայում զբօսնելու իրաւունքը: Երեկոյեան ժամը 18-ից եկէք մեզ հետ զբօսնելու Հիւսիսային պողոտայում, եթէ չէք ուզում, որ ամէն մի երեւանցու մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող այս «կարգականոնը» հաստատուի նաեւ ձեր փողոցում եւ ամբողջ քաղաքում», - ասուած է ՀԱԿ-ի՝ քաղաքացիներին ուղղուած կոչում:

ԼՈՒՐԵՐ

ՐԱՑԱՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ «ԽՈՐԱՆԱԿԼՈՒ ԵՆ»

«ԱԶԱՏՈՒԹՒԻՆ ՌԱՏԻՑ»: Հայաստանի կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեանի գնահատմամբ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական միտումները երկրում ընթացիկ տարուայ ընթացքում «խորանալու են»:



Հայաստանի կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեան

«Յառաջ, ե՛լ այսօրուայ իրողութիւնները, ե՛լ վերջին ամիսների ընթացքում դրսևերուած միտումները ասում են, որ արդէն այս տարին կորցրած տարի է մեր համար, եւ հասկանում ենք, որ բացասական միտումները խորանալու են», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Ասատրեանը: - «Բոլորս գիտենք, որ մեր տնտեսութեան կարեւորագոյն հատուածներից մէկը մասնաւոր տրանսֆերտներն են: Եւ բոլորս էլ հասկանում ենք, որ այս տարուայ ընթացքում մենք ունենալու ենք հսկան նուազում մասնաւոր տրանսֆերտների, ինչի մասին վկայում են այս տարուայ առաջին արդիւնքները (մասնաւոր տրանսֆերտների գծով):»

Բագրատ Ասատրեանի համոզմամբ, անհրաժեշտ է մարդկանց մէջ վերականգնել անցած տարուայ յետընտրական իրադարձութիւնների, եւ յատկապէս «Մարտի 1»-ի հետեւանքով կորցրած հաւատը իշխանութիւնների հանդէպ. - «Հաւատացէք, այդ հաւատի վերականգնման արդիւնքը անհամեմատ աւելի մեծ է լինելու»:

«Ճգնաժամային, վատ վիճակին դիմակայելու համար ինչ են անում նորմալ հասարակութիւն»

ները. բոլոր ուժերը կենտրոնացնում են: Մի բան, որ մեզանում անհնար է: Այսօր մեր հասարակութիւնը կիսուած է, պառակտուած է, - լաւելեց նա:

Կենտրոնական բանկի նախկին նախագահը ասաց. - «Յայտնի է, որ 2009 տնտեսական տարին մենք արդէն կորցրել ենք: Տնտեսական անկումը, ըստ իս, 10 տոկոսից աւելի մեծ է լինելու: Բայց եկէք այսօր մտածենք ինչ-որ միջոցներ, քայլեր, որ գոնէ 2010 թուականին վերականգնման միտումները առաջ գան: Այսօր ես դեռ պնդում եմ, որ ոչ մի երաշխիք չկայ, որ 2010-ին եւս չի շարունակուելու անկման միտումը»:

ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ. «ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐՈՂՆ Ի ԶՕՐՈՒ Է ՄՐՑԱԿՑԵԼ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՅԵՏ»

Աժ ֆինանսավարկային, բիւջետային եւ տնտեսական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասեանը, հայթուրքական տնտեսական շարաբերութիւնների վերաբերեալ ասել էր, որ շարաբերութիւնների հաստատման պարագայում «չհը երկուստեք է լինելու»:

«Շօր»-ին մասնաւորապէս հետաքրքիր է, թէ արդեօք կառավարութեան կամ Աժ յանձնաժողովի կողմից արուել են համապատասխան վերլուծութիւններ հայթուրքական սահմանի բացման դէպքում տնտեսական դրական եւ բացասական հետեւանքների վերաբերեալ, Գագիկ Մինասեանը պատասխանել է, որ հիմա նման խնդիր դրուած չէ, եւ որ «գլխաւոր խնդիրը շարաբերութիւնների հաստատումն է»:

«Հնարաւոր տնտեսական

վտանգներ դէպքում ի՞նչ է պատրասուում անել հակական կողմը» հարցին Գագիկ Մինասեանը պատասխանել է.

-Մեր տնտեսութեան մրցունակութիւնը բաւական բարձր է, եւ ցանկացած մրցակցային իրավիճակ նպաստաւոր է մեզ համար: Կարծում եմ, մեր ներքին արտադրողն ի գօրու է մրցակցել թուրքական արտադրողի հետ, ...մեր տնտեսութեան առջեւ որեւէ խնդիր չի ծագի, ուղղակի մեր ապրանքներն աւելի էժան կը յայտնուեն թուրքական շուկայում, եւ հակառակը»:

Նա նշել է նաեւ, որ կը լինեն հարցեր, որոնք կառնչուեն ազգային անվտանգութեան խնդիրներին, եւ համոզմունք է յայտնել, որ այդ խնդիրները կը կը գտնուեն համապատասխան մարմինների մշտական վերահսկողութեան տակ:

Մարուակուած էջ 2-էն մասին եւ միայն պաշտօնական աղբիւրներից տեղեկութիւններ հրապարակեն: Թող իրաւապահները եւ հասարակութիւնը սովորեն

դրան: Իսկ յետոյ, սակայն հերթով, հրապարակեն աղաղակող փաստեր, որ իրաւապահները չիճճուեն: Արդիւնքը գուցէ ունի նման լինի: Գուցէ արժէ, փորձել:

«ԼՐԱԳԻՐ»

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԻՐԱՆԸ ԸՆՅԱՍՏԱՆԻ ԿՍՏԱՐԵԼԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ Ե՛»

«Հայաստանը առանձնապատուկ կարեւորութիւն է տալիս իրանի հետ յարաբերութիւնների ընդլայնմանը», - իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ թեհրանում կայացած հանդիպումից յետոյ յայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը:



Մահմուդ Ահմադինեժադ պաշտօնական արարողութեամբ կը դիմաւորէ Սերժ Սարգսեանին

Իրանական աղբիւրների հաղորդմամբ՝ երկու նախագահները շուրջ մէկ ժամ շարունակ առանձնազրոյց են ունեցել երկկողմ յարաբերութիւնների եւ տարածաշրջանային խնդիրների շուրջ, ինչից յետոյ պատրաստակամութիւն են յայտնել ամրապնդել համագործակցութիւնը բոլոր ոլորտներում:

«Հայաստանը իրանը դիտարկում է որպէս վտանգի հարեւան եւ դժուարին օրերի բարեկամ», - ասել է Սերժ Սարգսեանը:

Մահմուդ Ահմադինեժադն էլ ընդգծել է, որ թեհրանը հետաքրքրուած է Հայաստանի կայունութեամբ: «Հայաստանի բարգաւաճումից եւ զարգացումից կը շահի ողջ տարածաշրջանը», - ասել է իրանի նախագահը:

Երկօրեայ հանդիպումների ընթացքում կողմերի միջեւ արդէն իսկ մի շարք փաստաթղթեր են ստորագրուել: ԻՏԱՍ-ՏԱՍՍ լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ հներգետիկայի նախարարները յուշագիր են ստորագրել Արաքսի ափին հիդրոէլեկտրակայան կառուցելու մասին: «Դա հօր շէկ է, որի նմանը տարածաշրջանում գոյութիւն չունի, - ասել է Սերժ Սարգսեանը:

Իրանական ԻՐՆԱ գործակալութեան հաղորդմամբ՝ կողմերի միջեւ քննարկուել են նաեւ հներգետիկ ծրագրերի ֆինանսաւորման ուղիները: Կը ստորագրուի համաձայնագիր իրան - Հայաստան երկաթուղու կառուցման մասին: Պաշտօնական աղբիւրների հաղորդմամբ՝ 470 կիլոմետրանոց երկաթուղու շինարարութիւնը կը տեւի առնուազն 5 տարի եւ կ'արժենայ աւելի

քան մէկ միլիարդ դոլար: «Թեհրանը ուզում է համագործակցել Հայաստանի հետ՝ նախկին խորհրդային այս երկրում ենթակառուցուածքները զարգացնելու հարցում», - ըստ ԻՐՆԱ-ի՝ յայտարարել է իրանի ֆինանսների նախարարը: Ըստ Հայաստանի նախագահի, կողմերը նախատեսում են կառուցել նաեւ խողովակաշար, որով Հայաստանը իրանից կ'ստանայ բենզին եւ դիզելային յէ:

Սերժ Սարգսեանը հանդիպել է իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանիի հետ: Վերջինս հաւատարմացրել է, որ Մեջլիս պատրաստ է հաւանութիւն տալ բոլոր այն ծրագրերին, որոնք կ'ամրապնդեն թեհրանի եւ Երեւանի յարաբերութիւնները:

Հանդիպումների ընթացքում քննարկուել է նաեւ Լեւնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման գործընթացը: Հայաստանի նախագահը շնորհակալութիւն է յայտնել պաշտօնական թեհրանին հաւատարակուած մօտեցման համար, իրանական կողմն էլ յայտարարել է, թէ փորձում է նպաստել անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատմանը տարածաշրջանում, այդ թւում՝ Ղարաբաղեան կարգաւորման բանակցութիւններում:

Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութեան կազմում են արտաքին գործերի, հներգետիկայի եւ բնական պաշարների, տրանսպորտի եւ կապի, էկոնոմիկայի, պիւլուքի նախարարները, Ազգային ժողովի պատգամաւորներ, Կենտրոնական բանկի նախագահը, պաշտօնատար այլ անձինք:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԳՆԱԺԱՍԱՅԻՆ ԽՈՒՄ

Մարուակուած էջ 1-էն

Իսկ Հայաստանի կառավարութեան կը կատարուին հետեւեալ առաջարկները.

- Համաձայնիլ, ստորագրել եւ իրականացնել կարգաւորման փաթեթը, շարունակել հասարակական գիտակցութիւնը պատրաստել հաշտեցման եւ խուսափիլ միջազգային մակարդակով Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ գործողութիւններէ, որոնք կը բորբոքեն թրքական հասարակական կարծիքը առկայ գործընթացի նկատմամբ:

- Մինսկի խումբի սկզբունքներու հիման վրայ Ատրպէյճանի հետ երթալ ԼՂ հարցի լուծման, սկսիլ Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն ետ քաշուիլ եւ Ատրպէյճանի հետ ձգտիլ խաղաղութեան, գիտակցելով, որ միայն այդ ճանապարհով է կարելի թուրքիոյ հետ յարաբերութիւններու նորմա-

լացման բանակցութիւններու: - Յստակ յայտարարել, որ Հայաստանը թուրքիոյ նկատմամբ որեւէ հողային պահանջներ չունի եւ կը ճանչնայ անոր տարածքային ամբողջականութիւնն ու 1915-ի կարսի պայմանագիրը:

- Համալսարաններուն եւ հիմնարկներուն քաջալերել աւելի շատ հետազօտութիւններ կատարել 1915-ի իրադարձութիւններու վերաբերեալ, փափաքելի է թուրք եւ երրորդ երկիրներու գիտնականներու մասնակցութեամբ:

Ասկէ գատ Միջազգային ճգնաժամային խումբը կ'առաջարկէ Միացեալ Նահանգներուն, Ռուսաստանին եւ Եւրոպային Միութեան ու անոր անդամ երկիրներուն խուսափելու այնպիսի օրէնքներէ, յայտարարութիւններէ եւ գործողութիւններէ, որոնք կրնան կասեցնել հայթուրքական կարգաւորման ու հաշտեցման ներկայ թափը:

Ա. ՉԱՏԻԿ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այժմ աւաղիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ Իւրոյ ի ձեռն մահուան Իւրոյ՝ յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ անբիծս եւ անարատս առաջի Նորա, եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ Աւետարանին, զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից»

(Կող. Ա. 22 - 23):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մեր եկեղեցիների խորաններից այսօր տրուում է մեզ մեր Տիրոջ եւ Փրկչի հրաշափառ Սուրբ Յարութեան աւետիսը: Հաւատաւոր մեր հոգիներին վերատին հնչում է մարդկութեան փրկութեան շնորհի անգուգական լուրը, թէ մեր Տէրը՝ Քրիստոս, հաշտեցրեց մեզ Աստծոյ հետ իր մարմնով եւ իր մահով, որպէսզի ներկայացնի մեզ Նրա առաջ սուրբ, անբիծ եւ անարատ, եթէ ամուր ու անսասան մնանք հաւատի մէջ եւ անխախտ յոյսի մէջ Աւետարանի, որ լսեցինք, եւ որ քարոզուեց երկնքի տակ բոլոր արարածներին:

Արդարեւ, ո՛վ կարող էր մարդկանց կանգնեցնել Աստծոյ առաջ սուրբ եւ անարատ, եթէ ոչ միայն՝ Աստծոյ Որդին, Ով քաւեց մարդկութեան մեղքը իր արդար ու պատուական արիւնով եւ իր յարութեամբ փրկեց մարդկանց մահից ու շնորհեց ուղին յաւիտենական կեանքի: Այսօր վերատին խնդրութեամբ օրհնաբանում ենք Քրիստոսին, նորոգում ենք հաւատքով եւ յոյսով, որ քարոզութիւնն է Աւետարանի, քանզի յարուցեալ է Փրկիչն աշխարհի, եւ մենք յուսացեալ ենք Նրա պարգեւած փրկութեան շնորհին:

Աստծուն հաւատալը Նրա գոյութեան մասին սոսկ իմացութիւնը չէ, այլ Աստծուն սիրելը, Աստծոյ Խօսքը ընդունելը, ինչպէս ուսուցանել են մեզ մեր հայրերը, եւ կենարար այդ խօսքով առաջնորդուելը: Հաւատքը թանկագին աւանդ է, հոգու կենդանութիւնն ու լոյսն է, որը պիտի պահպանել, խնամել, սնուցել ու աճեցնել, որ այն որեւէ մտածութեամբ, խօսքով կամ գործով չվնասուի ու չաւերուի մեր հոգում:

Հաւատքը Քրիստոսով, Ով «ճշմարիտ պատկերն է աներեւոյթ Աստծոյ», մարդկանց հանդէպ աստուածային սիրոյ ու ողորմութեան ճանաչումն ու փառաւորումն է եւ այդ սիրով ապրելը: Իր առաքելութեան ընթացքում մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, յաճախ էր խօսում հաւատքի կարեւորութեան մասին: Նա ուսուցանեց եւ հրաշագործեց առաւելաբար այնտեղ, ուր հաւատք գտաւ եւ տրտմեց ու վշտացաւ, երբ չգտնուեց յուսացեալ հոգի, հաւատք Աստծոյ հանդէպ, այլ միայն՝ արտաքին ձեւ աստուածապաշտութեան: Տէրը միշտ մեզ հետ է, եթէ մենք աներկմիտ հոգով Նրա հետ ենք: Իսկ ուր Տէրն է՝ ազատութիւն է, ճշմարտութիւն է, արդարութիւն է, սէր ու խաղաղութիւն է: Ուր Տէրն է՝ փրկութեան շնորհ է, բժշկութիւն, միխթարութիւն, յարուցեալ հոգի է, յոյս է եւ հաւատք:

Հաւատքի հրաշքն է պատմում մեզ Սուրբ Գիրքը. կոչւրը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրում, մահացածները յարութիւն են առնում: Այս ամէնը տեսնելով եւ Տիրոջ կենարար խօսքը լսելով՝ մարդիկ հետեւում էին Նրան՝ հաւատալով, որ իրականացել են Փրկչի մասին մարգարէութիւնները: Հաւատքը սասանուեց, եւ յուսալքութիւնը համակեց մարդկանց Քրիստոսի խաչելութիւնից յետոյ: Երկիւղը համակեց անգամ Տիրոջ աշակերտներին, ովքեր շփոթուած ու տարակուսած էին, երբ յարուցեալ Քրիստոս յայտնուեց նրանց մէջ եւ խօսեց նրանց հետ: Նոյն Տէրն էր առաքելներին աչքերի առջեւ՝ Նա, Ով խաչուեց եւ գերեզման դրուեց եւ Ում տեսնում էին, ահա, յարուցեալ: Այդժամ լուսաւորուած մտքով՝ առաքելները հասկացան, որ մարդկութեան համար բացուել է փրկութեան՝ մահուանից կեանք առաջնորդուելու ճանապարհը: Ու մինչ այդ, եթէ վախեցած եւ յուսաբեկ էին, այլևս մահից աներկիւղ տարածեցին Աւետարանը, որ յարուցեալ է Քրիստոս՝ Փրկիչն աշխարհի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր եւ միշտ յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ նորոգելու համար կեանքը, վերափոխելու աշխարհը: Յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է՝ հաստատելու աստուածսիրութեան եւ մարդասիրութեան ընթացքներում, որպէսզի մերժուեն սուտը, անարդարը, նախանձն ու ատելութիւնը, վերանան արհաւիրքն ու պատերազմը, ցաւը, հոգսը, կարիքը, եւ Աստծոյ շնորհն ու ողորմութիւնը մարդկային կեանքում առատանան այնպէս, ինչպէս երկիրն է ստանում երկնքից լոյս, ցոլ, անձրեւ եւ կանաչում է, ծաղկում ու պտղաբերում: Սակայն ի՞նչ կարելի է սպասել, ի՞նչ հեռանկար յուսալ, եթէ արարչաստեղծ կեանքը հաստատուի աստուածային ճշմարիտ սիրուց, աստուածային լոյսից հեռացող, Աստծուն ուրացող հոգու մէջ, ի՞նչ հեռանկար, եթէ ոչ այն, որ «չար ու խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան» (Բ. Տիմ. Գ. 13): Գալիքի յոյսը Աստուած է՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, Ով պարգեւում է մարդկանց զօրութիւնը յարուցեալ կեանքով ապրելու, միշտ դէպի բարին ընթանալու, դէպի խաղաղ, բարօր, ապահով ու արդար աշխարհ:

Քրիստոսով իր փրկութեանը, կեանքի նորոգութեանը հաւատաց եւ մեր ժողովուրդը՝ հաստատուելով անշարժ վէմին Աւետարանի քարոզած յոյսի եւ հաւատքի: Առաքելների, առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ու բազում սրբերի հաւատքով յարուցեալ Քրիստոս քայլեց մեր երկրում, լուսաւորեց մեր ժողովրդի կեանքը, օրհնեց մտքի եւ հոգու արգասիքներով, զօրացրեց եւ յոյսով պահպանեց փորձութիւնների ու նեղութիւնների մէջ: Փրկչին ապաւինած՝ մեր ժողովուրդը վեր յառնեց մահուան խորխորատներից եւ յարուցեալ իր նոր կեանքը վերընձիւղեց, իր սուրբ կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց ու թէեւ տարագիր ու աշխարհասփիւռ՝ մնաց համախումբ ու միասնական, հաւատաց արդարութեան յաղթանակին, ազատութեան իրաւունքին, բարիով ու բարիքով կեանքի վերափոխմանը, խաղաղ աշխարհի տեսիլքին:

Այս հաւատով ու ձգտումներով, սիրելի հաւատաւոր գաւակներ, այսօր ջանում ենք բարգաւաճ դարձնել Հայաստան եւ Արցախ մեր

հայրենի ազատ երկիրը, գօրացնել եկեղեցական եւ ազգային մեր կեանքը ի սփիւռս աշխարհի: Մեր յոյսերի ու նպատակների իրագործման եւ մեր օրերի դժուարութիւնների յաղթահարման համար ուղեկից դարձնենք մեզ միմեանց հանդէպ տէրունապատուէր սէրը, յարգանքը, ազնուութիւնն ու վստահութիւնը, հոգածութիւնն ու աջակցութիւնը, որ հիմքն ու ամրութիւնն են եկեղեցական ու ազգային մեր կեանքի, ընտանիքների, ընկերութեան, բարեկամութեան ու արդիւնաւոր գործակցութեան: Այդ արժէքներով են խնամուում եւ բարգաւաճում պետական ու հասարակական կեանքի կառուցները եւ ծառայում ընդհանուր բարիքին: Այդ արժէքները պիտի օգնեն մեզ յատկապէս այսօր, տնտեսական անհաստատ իրավիճակներում, առկա խնդիրների ու մտահոգութիւնների պայմաններում գտնելու հաստատուն եւ բարեյոյս ուղիները, Հայրենիքում եւ Սփիւռքում կեանքի կոչելու բարեբեր գործեր: Այո, աներկիւղ, «բարձրագլուխ պարծենում են» ու պիտի պարծենան ճշմարիտ հաւատքն ու հաւատի գործերը: Հաւատաւոր հոգու ազնիւ արգասիքները ամէն ասպարէզում, ամէն քայլափոխին իրական տեսնելով է, որ մեր գաւակները պիտի սովորեն դրանցով ապրել, ընտանիք սիրել, ընկեր սիրել, Հայրենիք եւ Աստուած սիրել: Արդ, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, հանդերձաւորուած Տիրոջ փրկութեան պարգեւներով, հաւատքով ու յոյսով միշտ նորոգելով մեր հոգիները՝ սիրով, միաբան, միասիրտ ու միակամ ծառայենք ազգային մեր բոլոր իղձերի ու նպատակների իրագործմանը: Եւ Տէրը, որ միշտ մեզ հետ է, տեսնելով մեր բարի գործերը, պիտի վարձատրի մեզ յարուցեալ կեանքով:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան բերկրալի աւետիսով եւ եղբայրական սիրով ողջոյն ենք չղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուկաֆեանին, Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Տիրոջ շնորհով լեցուն բազում արգասիք իրենց հոգեւոր առաքելութեան մէջ: Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր գաւակներին ի սփիւռս աշխարհի եւ մաղթում բարօր կեանք, բարի ծառայութիւն ու առատ արդիւնք:

Շաբ.ը էջ 18



Advertisement for the National Center for the Study of the Armenian Church. It features the logo of the National Center for the Study of the Armenian Church (ՆՈՐ ՄԵՐՈՒՆԻԿ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ) and the text 'ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ' (April Fasting). Below this is a portrait of a religious figure. The main text reads 'ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ' (Comitassi 140th Anniversary). At the bottom, it provides contact information: 'Ժողովրդական Երգչուհի, Արուեստաբան, ՓՐՈՖ. ՄԱՐԳԱՐԻՏ ԾԱՀԻՆԵԱՆ' (Folk Songstress, Artist, Prof. Margharita Tsakhinian), 'կը Գերկայացնէ ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԸ, ՀԱՆՃԱՐԸ ԵՒ ԱԻԱՆԴԸ, երգային կատարումներով' (she presents the Hymns, Liturgy and Psalms of Comitassi with musical performances), 'Երեքշաբթի, Ապրիլ 21, 2009' (Wednesday, April 21, 2009), 'երեկոյեան ժամը 8:00-ին' (at 8:00 PM), 'Կլէմտէյի Կեդրոնական Գրադարանի սրահին մէջ 222 E. Harvard St., Glendale' (at the Central Clematis Library Reading Room), 'Մուտքը Ազատ' (Free Admission), 'Հիրասիրութիւն' (Love).

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԾՈՎԱՅԵՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ՝ ՍՈՄԱԼԻԱ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Սկսելով կոմունիստական ժամանակաշրջանի որոշ մէկ հատուածի Մոսկուայի մէջ շրջան մը «պապանձուած լեզուներուն» բացուելուն առիթ տուած «Վախժանականք» էն միջեւ Չեխոսլաւաքիոյ դէմ կատարուած Պրեժնեկեան - յանուն ժողովրդավարութեան - գինական արշաւանքը, իմ միութեան վարչակարգը բարեփոխելու հեռանկարներով հրապարակ իջած Սախարով, եւ «պապից աւելի պապական» դարձած հայերու պարզած գաղափարական հայափնաս դրսեւորումները, (այդ փոքրիկ ժողովուրդից որքան շատ մարդ աքսորեցին 37-ին եւ 49 -ին) որոնք լուրջ, այլապէս ցնցիչ մտորումներ ունենալու պատճառներ կը դառնան Ստեփան Ալազազեանին համար:

«Յորձանուտը» ի էջերուն մէջ՝ իրենց խոհերով, երազներով, շատ



յաճախ իրենց մարդկային բնագոյներով, տկարութիւններով եւ ժխտական արարքներով ներկայութիւն են մեր գրողներէն շատեր:

Հոն տեղ են գտած Գուրգէն Մահարիի «Այրուող Ազգեաններ» վէպը հրապարակէն դուրս քաշելու եւ Պարոյր Սեւակի «Եղիցի Լոյս» ի հրատարակումը մերժող ցաւալի մանրամասնութիւններ, յաջորդական գլուխներով:

Շահագրգռութեամբ կ'ընթերցուին մեր հայ մտաւորականութեան երեւելիներուն՝ Սերո խանգատեանի, Նայիրի Զարեանի, Սիլվա Կապուտիկեանի, Օտեանի եւ Շանթի, Վահրամ Ալազանի, Գէորգ Էմինի, Հրաչեայ Քոչարի եւ անոր «Նահապետը» վիպակի, Հրանդ Սամուէլի եւ Զարեհ Որբունիի հետ իր ունեցած անձնական շփումներուն մասին:

Ստեփան Ալազազեան փորձառաբար հոգեբանական շատ մը հետեւութիւններ կը հանէ, որոնք մտածել կու տան ընթերցողը հայ ազգի հոգեմտաւոր առաջնորդութիւնը ստանձնած հայ մտաւորաններու մասին: Օրինակ, «Փառամոլութիւնն է նախանձ ծնում, նախանձը՝ չարիք»: «Քինախնդիր են դառնում փառամոլները, որոնք ոչ ներել գիտեն, ոչ ներողութիւն խնդրել»: «Ի՞նչ անուն տալ շքանշան ու մրցանակ ստանալու հիւանդութեան»:

Այս բոլորէն ետք, Պարոյր Սեւակի չտեսաւ «Եղիցի Լոյս» ի հրատարակութիւնը:

Իրենց առօրեայ կեանքին մէջ, հայազգի տաղանդաշատ գրողներու հետ հանդիպելու ջերմ անկիւն մըն է Ալազազեանի «Յորձանուտը», ուր տիրական են անկեղծութիւնն ու մարդկայնութիւնը:

ԳՈՂԱՐ ՍԱՐԴԱՐԵԱՆ «ԱԶԳ»

Վերջերս լոյս տեսաւ «Ինքնագիր» գրական հանդէսի 5-րդ համարը: Պէտք է խոստովանել, որ հանդէսի իւրաքանչիւր համար թարմութիւն է մեր գրական-մշակութային կեանքում: Երեւոյթները դիտուում են նոր տեսանկիւնից, անկաշկանդ հայեացքով: Իսկ այս համարն առանձնապատու էր առաւել, քանզի գրական բացառապատմը վերաբերում էր մեր մեծին՝ Եղիշ Զարենցին:

Առաջին անգամ մեր երկրում ներկայացուած են Զարենցի այն բանաստեղծութիւնները, որոնք գրուած են ոչ աւանդական սեռական կողմնորոշման ելակէտից:

Դժուար է այս թեմային մօտենալ մեր իրականութեան մէջ: Բայց որքանո՞վ է նախընտրելի ծածուկ պահելը:

Անշուշտ հայ ընթերցողը, կամ մեր քաղաքացին գուցէ մի պահ սարսուց՝ տեղեկանալով, որ իր կուռքն էլ է հակում ունեցել իր կողմից մերժելիին ու արգահատելիին:

Բայց նա պարտաւոր է իմանալ եւ կարգալ այդ բանաստեղծութիւնները, որովհետեւ նրանց մէջ էլ է խօսում ինքը՝ Զարենցը:

Ինչպէս յայտնուեցին Զարենցի այս գործերը «Ինքնագիրը» թարգմանաբար տպագրել է Հարվըրտի համալսարանի պրոֆեսոր Ճէյմս Ռ. Ռասելը «Եղիշ Զարենցի անտիպ բանաստեղծութիւնների արխիւից» յօդուածը, որը լոյս է տեսել ԱՄՆ-ում 2004 թուականին եւ ամփոփուել «Հայագիտութիւն եւ իրանագիտութիւն» ժողովածուի մէջ:

Հեղինակն ինքն է ներկայացնում, թէ դրանք ինչպէս են յայտնուել իր ձեռքում: Ձերբակալութիւնից մի քանի ամիս առաջ Զարենցն այդ բանաստեղծութիւնների ձեռագրերը յանձնում է իր երիտասարդ բարեկամին՝ Գէորգ Էմինին ի պահպանութիւն: Եւ ուղեկից գրութիւն՝ թղթի մի կտորի վրայ, դրանք ոչ մի դէպքում չօչնչացնել: Անգամ աւելացնում է. «լաւ է յանձնել ուր լինի, անգամ իմ կեանքի օրով՝ իմանալով, որ սրանք ինձ կը կորցնեն, քան ոչնչացնել»:

1998 թուականին Ճէյմս Ռ. Ռասելն այցելում է Հայաստան, հիւրընկալուած էմինի որդուն՝ Արտաշէս Էմինին, վերջինս էլ նրան է տրամադրում բանաստեղծի արխիւային նիւթերի լուսապատճէնը: Տանելով ԱՄՆ, նա հրապարակում է դրանք՝ գուզահեռ ներկայացնում, թէ երբ են Զարենցի մօտ ի յայտ

գալիս համասեռամոլութեան յատկանիշները, երբ եւ ինչ պայմաններում է գրել այս բանաստեղծութիւնները: Հիմնականում էրոտիկ բնույթի այդ գործերը ստորագրուած են 1936 եւ 1937 թուականներին: «Ինքնագիրը» տպագրել է դրանք, թուով 11 բանաստեղծութիւն:

Այնտեղ նոյն Զարենցն է՝ էմոցիոնալ, գերզգայուն, սակայն էրոտիկ եւ սեքսուալ նոր հակումների արտայայտութեամբ:

Հաւատը որպէս ճանապարհի աւարտ չենք կարող չիօսել նաեւ Ճէյմս Ռ. Ռասելի յաջորդ յօդուածի մասին, որը կրկին «Ինքնագիր»-ի էջերում է: Այն, ըստ էութեան, նախորդի թեմատիկ շարունակութիւնն է, ուր բանաստեղծի այս հակումներն ու բացեցքները հեղինակը քննում է այլ լոյսի տակ: Դրանք ձեռք են բերում այլ արժէք, եւ ստանում բովանդակային լրացուցիչ հազեցուածութիւն: Յօդուածը վերնագրուած է «Զարենցը՝ մարգարէ»:

Յօդուածն ըստ էութեան լուրջ ուսումնասիրութիւն է: Այն վերաբերում է բանաստեղծի կեանքի վերջին տարիներին: Յիշենք իրավիճակը. երկրում մոլեգնում էին ստալինեան բռնութիւնները: Արդէն մէկ տարի բանաստեղծը գտնուում էր տնային կայանքի տակ, եւ ամէն օր սպասում էր, որ «գալու են» իր հետեւից: Նա սպրում էր անվերջանալի մղձաւանջի մէջ: Մղձաւանջը յատկապէս խորանում էր գիշերները. բանաստեղծն ընկնում էր տրանսի մէջ, վերանում էր իրականութիւնից, ժամանակը կանգ էր առնում, անհետանում էր տարածութիւնը:

Զարենցի մօտ հաւատն ու սեռական ապրումները միախառնուում են: Ծայրայեղ անյոյս իրավիճակներում նրան այլ բան չի մնում, քան քայլել դէպի հաւատը: Այդ ճանապարհը նա անցնում է վախուրդած, կասկածելով, սայթաքելով, հետհետ նայելով:

Հակասական են հաւատի հետ կապուած ապրումները, ընթանում է ներքին դաժան պայքար, բայց նրան այլ բան չի մնում, նա դատապարտուած է խարխիւր գցել հաւատքի դաշտում: Ահա 1936 թ. Հոկտեմբերի 25-ին գրած «Վերջին աղօթք» բանաստեղծութեան վերջին հատուածը.

Բայց ես դիմում եմ քեզ, ինչպէս յաճախ/Անպատում՝ անեղ սամուների ժամին՝/Քարաւանի տէրերն արնաշաղախ/Թողած այնքան ուշիմ ու խորամիտ/Փորձառութիւնն իրենց՝ լոկ ուղտերի դեղին/Բնագրին են կառուում եւ գտնում ուղի...

ԳՐԱԽՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
Ապգային, ժողովրդական, դասական երգերի անվուգական կապարող, հայրենի երգիչ
ՀԱՍԼԵԹ ԳԵՈՐԳԵԱՆԻ
և իր 8 հոգիէ բաղկացած նուագախմբի,
համերգները փեղի պիպի ունենան Կլէնփէյլում
Կիրակի, Յունիսի 7-ին և Շաբաթ Յունիսի 13-ին
Glendale High School-ի հանդիսասրահում, 1440 E. Broadway.
Տոմսերի և մանրամասնութիւնների համար հեռախօսել՝
Chaterian Video 818-242-6968 • Yerevan Printing 818-246-2070 • Kach Nazar 818-246-0125
Խումբը ելոյթներ է ունենալու նաեւ Ամերիկայի փարբեր հայաշապր քաղաքներում:

ՊԱՏՄՈՒԱԾԵ

ՔԱԻՈՐԸ

ՀԱՆՏԱՐՆԵՐԻ ԴԱՐՔՆՈՅԸ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՑԵԱՆ

- Լսիր, վարդան, արի Արիսին նորից կնքենք. նրա քառորին փոխենք եւ նրա տեղը մեր Նշանին ընտրենք - ասաց Նուշիկը ամուսնուն:

- Ի՞նչ, զարմացած հարցրեց վարդանը:

- Ասում եմ՝ երեխայի քառորին փոխենք:

- Որ ի՞նչ լինի: Մի անգամ քառորը ընտրել ենք, կնուենք արել եւ վերջ: Հիմա եթէ երկու ընտանիքների յարաբերությունը խզուել է, վնաս չունի, կարծիր, որ քառորը երկրորդ հեռացել է: Մի բան էլ կայ՝ դա մեր եկեղեցու օրէնքին հակառակ է:

- Բա ինչպէ՞ս Մելքոնեանի հարսն իրենց երեխային կրկին կնքեց ու էդ յայտնի նկարիչ Ռուբիկին քառոր ընտրեց:

- Չի կարող պատահել:

- Կարող է եւ պատահել է: Նայիր, սա էլ կնուենք քաղցրն է: Նրանց գործաւորը տուեց եւ ասում էր, թէ ինչ մեծ ինճոյք են արել...

- Լաւ, բաւական է: Նրանք յայտնի մարդիկ են, ուրեմն նրանց կարելի է: Մեզ հետ բոլորովին կապ չունի, թէ նրանք ինչ են անում:

Նուշիկի առաջարկը չընդունուեց: Նա մի քիչ տրտնջաց եւ համոզուեց, որ ուրիշ քառոր ընտրելն անիմաստ է:

\*\*\*

Մելքոնեանի հարսը՝ Ամալիան, մի համեստ ընտանիքի աղջիկ էր, հայրը մի բարի ու խոնարհ արհեստաւոր, իսկ մայրը՝ հմուտ կարուհի:

Ամալիան աւարտելով միջնակարգը՝ սկսում է հետեւել կարուհեւի եւ ձեռարուեստի դասընթացների, կարճ ժամանակում ձեռք բերում աչքառու առաջընթացներ: Այդ ընթացքում մայրը հիւանդանոցում է: Ամալիան փոխարինում է մօրը՝ յանձն առնելով նրա փոքրիկ արհեստանոցի գործերը:

Ամալիան ամուսնանում է մի բարեկիրթ տղայի հետ: Հինգ տարի խաղաղ ու համերաշխ կեանք վարելուց յետոյ անսպասելիօրէն բաժանուում են:

Ամալիան ընդարձակում է իր աշխատանքը: Վարձում է երկու հմուտ կարողներ, եւ նրանց որակեալ աշխատանքներով մի քանի ցուցահանդէսներ կազմակերպելով ձեռք է բերում մի շարք հարուստ եւ համայնքում ճանաչուած չաճախորդներ: Ամալիայի շրջապատը փոխում է: Փոխում են նաեւ նրա սպասելիքները, նիստ ու կացը եւ նաեւ ինքը...

\*\*\*

Մի օր, հաւաքներից մէկում ծանօթանում է հանրայայտ արուեստագէտ Մելքոնեանի տղայի՝ Սուրէնի հետ, որը նոր էր արտասահմանից վերադարձել: Սուրէնն սպասում էր իր փաստաթղթերին, որ աշխատանքի դիմի:

Սուրէնի հետ ծանօթանալուց յետոյ, Ամալիան, իր առողջութիւնը վտանգելու գնով կրկին պատկուած է աշխատանքի ժամերը, ինչի դիմաց շօշափելի գումար է վաստակում:

Ամալիան իրենց տան առօրեայ կենցաղը ենթարկում է հսկայական փոփոխութեան, փոխում է տան կահ-կարասիքը, խոհանոցը, բաղնիքը, լուսցարան, որոնք բարձրորակ սարքաւորումներով արդիական են դառնում: Մտորների համար գնում է տասնեակներով նոր

հագուստներ, կօշիկներ եւ այլ պիտոյքներ:

Մի օր, հայրը, համբերութիւնը հատած, հարցնում է.

- Աղջի, Ամալիա, այս աւելորդութիւններն ինչի՞ համար են:

- Ուզում եմ, որ Սուրէնի ծնողների մօտ ձեր գլուխը բարձր պահէք: Սուրէնի մայրը՝ Տիկին Սիրուշը շաբաթը երկու անգամ վարսաւիրանոց է գնում: Պրն. Մելքոնեանը իմ տեսած ամենակոկիկ ու ճաշակով հագնող տղամարդն է: Ուզում եմ, որ նրանց նման ներկայանալի դառանք:

Ամալիան իրենց առօրեայ կեանքի համար նոր ծրագրեր մշակելով ջանում էր երկու ընտանիքների միջեւ եղած դասակարգային ճեղքը ծածկել, բայց...

\*\*\*

Սուրէնի եւ Ամալիայի մտերմութիւնը եւ փոխադարձ սէրը նրանց մղեց դէպի միացում: Նորանք նշանուեցին:

Սուրէնի փաստաթղթերը տեղ չհասան: Դա նրան բոլորովին չէր մտահոգում: Նրա մայրն այնքան ունեւոր էր, որ կը կարողանար իր տղայի ամուսնութեան եւ առօրեայ ծախսերը հոգալ, նոյնիսկ մի յարկաբաժին էլ տրամադրել նրանց: Սուրէնն ու Ամալիան ամուսնացան արտասահմանում: Երբ վերադարձան՝ նրանց կահաւորուած յարկաբաժինը պատրաստ էր:

Ամալիայի արհեստանոցը մնաց ծնողների բնակարանում: Սուրէնը նրա վաստակած դրամի կարիքը չունէր: Սակայն Ամալիան, ելնելով իր երեւան բերած, չնախատեսուած ծախսերից, որոնք կապուած էին տարօրինակ ծրագրերի հետ, պէտք է աշխատէր:

Ամուսնութիւնից մէկ տարի անց որդին ծնուեց: Երեխայի մկրտութեան եւ տարեդարձի առթիւ ինճոյքներն իրենց շքեղութեամբ իւրապատուկ էին: Խնճոյքներին հրաւիրուած էին, համայնքի բարձր դասի ընտանիքները, որոնք մեծամասնութեամբ, Սուրէնի շրջապատից էին: Ամալիայի համար, ինճոյքների ծախսերն ու դրանց պատճառով իր խաթարուած առողջութիւնը կարեւոր չէին: Կարեւորն ուրիշ բան էր...

\*\*\*

Ամալիան իւրաքանչիւր ինճոյքի առթիւ երկու անգամ էր հիւրասիրութիւն կազմակերպում: Մէկը յատկացնում էր անմիջական հարազատներին ու շրջապատին, որոնց թւում էի նաեւ ես: Մեր հաւաքը շատ պարզ ու սովորական էր: Այդտեղ աւելորդութիւն ձեւականութիւն ու կաշկանդում չկային: Մի խօսքով՝ մենք՝ մենք էինք:

Ամանորի առիթով ընթրիքի էի հրաւիրուել: Երբ ընթրիքն աւարտուեց, սուրճը մատուցուեց եւ հիւրերը պատրաստուած էին մեկնելու, Ամալիան կանչեց սպասուհուն.

- Արեգ, Արեգ, զամբիւղը բեր: Արեգը խոհանոցից դուրս եկաւ ձեռքին մի գեղեցիկ զամբիւղ, որի մէջ ինամքով ու ճաշակով դասաւորուած էին գոյնզգոյն, արջուկաձեւ շաքարներ, որոնք յանձնեց Ամալիային:

- Սա էլ էմիլի կողմից, - ժպտալով ասաց նաեւ սկսեց շաքարները բաժանել: Ոչ մի ուրիշ խօսք:

Արջուկ-շաքարը ձեռքս առած տուն եկայ: Դրան նայելով՝ Նուշիկին յիշեցի: Խեղճ Նուշիկ, իրա-

ԼԵՒ ՕԳԱՆԵՁՈՎ

1824թ. Թիֆլիսում վրաստանի հայկական թեմի առաջնորդ Ներսէս Աշտարակեցու նախաձեռնութեամբ հիմնուեց կովկասում առաջին հայկական միջնակարգ դպրոցը, որը հետագայում իր ստեղծողի անունով կոչուեց Ներսիսեան ճեմարան: 1909թ. Արսենայի սարի վրայ հայ մեծահարուստ բարերար Արեքսանդր Մանթաշեւի միջոցներով ճարտարապետ Պ. Զուրաբեանը (1874-1942թթ.) Մ. Նեպրինցեւի հետ համատեղ սկսեց նոր ուսումնական մասնաշէնքի կառուցումը: Երկարարութիւնն աւարտուեց 1911-ին:

Ներսիսեան ճեմարանն աւարտողները դառնում էին ուսուցիչներ, հրապարակախօսներ, մշակույթի, գրաքննադատութեան եւ այլ ասպարէզների գործիչներ:

Ճեմարանի առաջին շրջանաւարտներից էին իրաւաբան Աբովեանը եւ Ստեփանոս Նազարեանը: Ներսիսեան դպրոցում, այնուհետեւ ճեմարանում սովորել ու դասաւանդել են այնպիսի կարկառուն դէմքեր, ինչպիսիք էին Յովհաննես Թումանեանը, Յարութիւն Ալամդարեանը, Ռաֆայէլ Պատկանեանը, Գաբրիէլ Սունդուկեանը, Մակար Եկմալեանը, ինչպէս նաեւ Անաստաս Միկոյեանն ու մարշալ Յովհաննէս Բաղրամեանը:

Չնայած պրոֆեսիոնալ հայ թատրոնի պաշտօնական ստեղծման տարեթիւը համարուած է 1858-ը, սակայն շատ աւելի վաղ Ներսիսեան ճեմարանի սաները վանքի տաճարի բակում խաղացել են սիրողական ներկայացումներ, որոնք զբաւեւ են հանրութեան ու շաղրութիւնը: Սիրողական թատրոնի ստեղծողն ու ղեկավարը Ներսիսեան ճեմարանի ուսմասվար Յարութիւն Ալամդարեանն էր: 1836թ. դպրոցի սաները մասնակցել են նաեւ ապագայ քաղաքագլուխ Գալուստ Երմազանովի սեփական տանը (այժմեան Լեւոնտովի փողոցում) կազմակերպուած թատերական ներկայացումներին (կովկասում ցարա-

կան փոխտեղակալ Մ. Վորոնցովի նշանակումից յետոյ Թիֆլիսում ստեղծուեցին բազմաթիւ պրոֆեսիոնալ թատրոններ):

1924թ. ճեմարանը փակեցին: Ամբողջ մի դար այն կովկասահայութեան աշխարհիկ եւ հոգեւոր կրթութեան խոշորագոյն կենտրոնն էր:

1951թ. Ներսիսեան ճեմարանի նախկին սաները ստեղծեցին ներսիսեանցիների ընկերութիւն, որը մեծ աշխատանք էր տանում տարբեր բնագաւառներում ճեմարանականների ստեղծագործական ժառանգութիւնն ուսումնասիրելու եւ հրատարակելու ուղղութեամբ:

Խորհրդային իշխանութեան տարիներին նախկին Ներսիսեան ճեմարանը պատկանում էր վրաստանի պոլիտեխնիկ ինստիտուտին: Այնտեղ գործում էին մի քանի ֆակուլտետներ: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ նորաստեղծ հանրապետութիւններում սկսուեց նախկինում բռնազրաւուած սեփականութիւնների վերադարձը հին տէրերին:

Այս սպ է ս, Սանկտ Պետերբուրգի քաղաքապետարանը Նեւսկի պողոտայի 40-42 հասցեում գտնուող Լազարեանների մասնաշէնքերը փոխանցեց քաղաքի հայկական համայնքին: Սբ. Էջմիածնին վերադարձուեց Նեւսկի պողոտայում գտնուող Սբ. Եկատերինայի եւ Վասիլեւեան կղզում գտնուող Սբ. Յարութեան եկեղեցիները: Մոսկուայում Հայաստանի կառավարութեանը փոխանցուեց նախկին Լազարեան ճեմարանի շէնքը:

Կարելի է յոյս դնել վրաստանի կառավարութեան եւ ժողովրդի բարի կամքի վրայ Ներսիսեան ճեմարանի ապագայ կարգավիճակի որոշման հարցում՝ դժուար է ասել: Առաւել եւս հիմա, երբ այնքան սրուել է վրաստանի տարածքում գործող հայկական եկեղեցիների պատկանելութեան հարցը, իսկ վրացիները պահանջում են Հայաստանի տարածքում գտնուող իբր թէ վրացական եկեղեցիները:

ուումք ունէր ամուսնուն առաջարկել, որ իրենց երեխայի քառորին փոխեն: Բայց Նուշիկը մոռանում էր, որ չէր կարող «բարձր խաւին պատկանող» Ամալիային հետեւել: Արեգի պատմելով՝ քահանան ու քառորը մի քանի ժամ առաջ

տուն էին եկել եւ մկրտութեան արարողութիւնը կատարել: Վերջերս մեր համայնք գործողուած արտասահմանցի խեղճ հովիւն ինչ իմանար, թէ երկրորդ անգամ էր կնքում փառասէր Ամալիայի որդին...

**ԵՐԵՒԱՆԸ  
ՆՇԱՆ ԵՒ ԳՆԵՅԵԱՆ**

<p>Բաց երկնքում թանգարան է Երեւանը, Գողթան երկրի հին երգերի՝ երգարան է Երեւանը Մեր հայկական լեռնաշխարհի հազար ու մի թեւով բազմած, Տաճարների կամարազարդ, վեհ Մասիս է Երեւանը:</p> <p>Հանճարների ու գիտութեան լոյս կանթի է Երեւանը Հին օրերի, երազների, անթեղ լոյս է Երեւանը, Մեր հնամենայ Յայաստանի, յոյսի ծով է Երեւանը, Արեւախառ, արեւահամ, հուր տեսիլքով Երեւանը:</p> <p>Բամադարեայ խոր վերքերի սպեղանից է Երեւանը, Աղօթքների ու օրհնութեան, սուրբ մատուռ է Երեւանը</p>	<p>Մեր հնամենայ կոթողների, զարդն ու շուքն է Երեւանը Ու քարակերտ յոյժ վանքերի, կանգուն սիւնն է Երեւանը:</p> <p>Ծիածանի գոյնների մէջ, վառուող ջահ է Երեւանը Աստուածափայլ երկնքի տակ, ծիրանի ծով է Երեւանը Մեր խնկաբոյր Յայաստանի, բաց խորանց է Երեւանը Ու Չարեցեան փառքի ճամբից՝ լուսամփոփ է Երեւանը:</p> <p>Մամուռայր շիրիմների, անհուն կուռքն է Երեւանը Մագաղաթեայ մատեանների, հաստ էջերի Երեւանը Ամէն կողմից նախճիր եղած, բազմազարդար Յայաստանի Վառ մոմերի բոցով խամրած, վե՛ս խաչքարի Երեւանը:</p>
---	---

### ՍԱՐՍԱՓԱԶԴՈՒ ՖԻԼՄԵՐԻ ԱՐՇԱԻԸ...

Շաբաթական 7-էն

պէս են փողհարում կայանի հաղորդավարները):

Անկասկած, հայկական սերիալների ստեղծումը նիւթական մեծ միջոցներ է ենթադրում: Կը նշանակի բաւական հաշուենկատ են դրանք ստեղծողները, նրանք գիտեն, որ մեծ շուկայ ունեն եւ վնաս չեն կրի:

Ուրեմն՝ կայ ասպարէզ, կայ նիւթական հնարաւորութիւններ, կան դերասանական ուժեր եւ սիրող դերասանների մի հսկայ բանակ:

- Ինչո՞ւ ուրեմն այսքան հնարաւորութիւնների առկայութեամբ չստեղծել գեղարուեստական բարձրարժէք ֆիլմեր, թէկուզ սերիալներ:

Գրեթէ յիսուն տարի, փորձում ենք աշխարհին հասկացնել, որ հայը բունբարուած է, կողոպտուած, կոտորուած:

Մեր դատը պաշտպանելու ճանապարհին անուշադրութեան ենք մատնուած ֆիլմարուեստը, այսօրուայ պրոպագանդի հզօրագոյն գէնքը:

Տարիներ շարունակ ասում, խօսում, գրում ենք ցեղասպանութեան մասին եւ չենք ստեղծում այդ թեման արծարծող արժէքաւոր գեղարուեստական ու փաստագրական ֆիլմեր, ինչո՞ւ է՝ նաեւ սերիալներ:

Հնարաւոր է՞ արդեօք ստեղծել մեր ժողովրդի պատմութեան, նրա հերոսական դրուագների, առասպելական կերպարների, ի վերջոյ՝ դարի առաջին ցեղասպանութեան մասին պատմող վաւերական-գեղարուեստական ֆիլմեր:

- Ի հարկէ հնարաւոր է: Բայց փողը, այդ պաշտելի ու անիծուած դրամը ստիպում է, որ ֆիլմարտադրիչներն ընկնեն էժանազին ու լայն սրահ ապահովող սերիալների ետեւից:

Ես ինչո՞ւ մեր յօդուածի սկզբում խօսեցի ամերիկեան «Ընթերցողը» ֆիլմերի մասին, - որպէսզի ասեմ, թէ ինչպէս հրեաները տասնամեակներ շարունակ, իրենց Հոլոքոստը չի շեղում ֆիլմեր են

պատրաստում, մինչդեռ մենք՝ հայերս չենք կարողանում ճշգրտող փաստերի առկայութեամբ անգամ միջազգայնացնել մեր ցեղասպանութեան հարցը եւ գեղարուեստական ֆիլմերի օգնութեամբ ճանաչել տալ բոլոր երկրներին:

Ինձ յաջողուց պարզել, որ յիսուն տարուայ ընթացքում հրեաներին յաջողուել է ստեղծել հազարի հասնող գեղարուեստական եւ վաւերագրական ֆիլմեր, իսկ մենք ստեղծել ենք ընդամենը ... 10-12 ֆիլմեր, որոնցից 2 կամ 3 ֆիլմեր են գեղարուեստական, մնացելը՝ վաւերական-փաստագրական:

Չմոռնամ ասել, որ հրեաներին յաջողուել է բազմաթիւ ֆիլմեր միջազգային ճանաչման արժանացնել, իսկ մեր ֆիլմերից եւ ոչ մէկը, որքան որ գիտեմ, նման տարածում չի ունեցել:

Վերջին մէկ-երկու տարուայ ընթացքում մամուլում երեւան եկան յայտարարութիւններ, ըստ որոնց ամերիկեան յայտնի դերասաններ թօմ Քրոլզը, Սիլվիստեր Ստալոնը ցանկութիւն էին յայտնել նկարահանուել «Մուսա Լեւան 40 Օրերը» լիամետրաժ գեղարուեստական ֆիլմում, սակայն, հենց միայն վերջերս յայտնի դարձաւ, որ տեղի տալով թուրքերի ճնշմանը, նրանք հրաժարուել են այդ մտքից:

Է՛հ, ի՞նչպէս չի շեղ Սուդանականին. «Գէլի վիզը ընդուն ա հաստ, որ իր գործերն իրա ձեռով ա անում...»:

Բայց, ինչպէս երեւում է փորձից, հայի ձեռքերը «կարծ» են եւ, ինչպէս կ'ասեն Հայաստանի Խորհրդարանի՝ հայերէնին գերագանց տիրապետող պատգամաւորները, «ամէն տարուայ միջին կտրուածքով» դրանք էլ աւելի են կարճանում...»:

Իսկապէս, մեզ չի յաջողում եղեւնի վերաբերել մի շնորհքով ֆիլմ պատրաստել, որը կարողանայ միջազգային պատասաններ նուաճել: Պէտք է փորձել նուազեցնել հեռուստատեսային կայաններից սիւնուող վախ ու սարսափ առաջացնող սերիալների քանակը՝ դրանց «տարածումը» թողնելով DVD արտադրող ընկերութիւններին:

Յանձնաժողովի նոր վարչականները: Գիշերը յառաջացած էր. իւրաքանչիւր միութենական մեծապէս բաւարարուած վերադարձաւ իր բոյնը, այն հանգիստ խղճով, թէ պտուղը ծառէն հեռու չ'իջնար: Եւ մենք՝ բոլորս, այդ պտուղներն ենք, Բարեգործականի պտուղները: Ապրի՛ք բոլորդ:

Հ.Ա.Ս.

### ՉՈՐՔ ՍԱՐԶՊԱՆԻ ԳԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄԵԱԿ

Շաբաթական 8-էն

եւ Մուշեղ Մարտիրոսեան Սրբազաններուն: Պրն. Յակոբեան իր շնորհակարութիւնները յայտնեց նաեւ, օրուան հանդիսութեան համանախագահներ Տէր եւ Տիկ. Յովհաննէս Մանուկեանին, Տէր եւ Տիկ. Արտաւազդ Գալստեանին, Տէր եւ Տիկ. Սեդրակ Կէպէնյանին, գլխաւոր բանախօսին եւ խօսք առնողներուն: Գնահատեց գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերողները, եւ մաղթեց, որ «մեր երիտասարդները շարունակեն իրենց վառ գործունէութիւնը բարձր պահելով այն ջահը, որ պիտի փոխանցուի իրենց»: Ապա, Պրն. Յակոբեան հրաւիրեց Առաջնորդ Յովնան Արք. Տէրախանը, հաղորդելու իր պատգամը:

Առաջնորդ Սրբազան Հայրը, իր ներշնչումը վերցնելով ձեռնարկին արտասանուած՝ Չորք - Մարգարանի հերոսամարտին ձօնուած Միամանկութիւն բանաստեղծութենէն «Մեր հերոսներէն յոյսը մեզի կը նայի» պատկերէն, շեշտը դրաւ «յոյսի» վրայ, որ 1909-էն սկսած, հարիւր տարի գործած է մեր ազգի պատմութեան մէջ: Դպրոցներ, եկեղեցիներ կառուցուեցան, մշակու-

թային հաստատութիւններ կազմուեցան, եւ բոլորը եղան նշան՝ մեր աշխարհացրիւ կեանքին մէջ այն բանի համար, որ մեր ազգի զաւակները գիտեն ապրիլ եւ չեն մերժեր մահը, որպէսզի արդարութիւն կատարած ըլլան վասն հայրենեաց եւ վասն հաւատքի:» Սրբազան Հայրը դիտել տալէ ետք, թէ հերոսներու արեան կանչը արձագանգ գտած է Չորք - Մարգարանցիներու հոգիներուն մէջ, կոչ ուղղեց անոնց ջանադիր ոգիով շարունակելու իրենց աշխատանքը:

Ձեռնարկը յանգեցաւ իր աւարտին, հանդիսատեսներու կողմէ յոտնկայս երգելով «Կիլիկիա» երգը, որ հանդիսութեան ոգեկոչական բովանդակութիւնը հասցուց իր լրումին:

Գնահատելի եւ ուսանելի հանդիսութիւն մը արդարեւ, որուն համար կը շնորհաւորենք Չորք - Մարգարանի Հայրենակցական միութիւնն ու անոր խանդավառ Յանձնախումբի անդամ անդամուհիները, որոնք հանդիսութիւնը ծաղկեցուցին նաեւ փայլուն հիւրասիրութեամբ:

Բիւր յարգանք Չորք - Մարգարանի մեծ հերոսամարտի եւ հոն ինկած ազատամարտիկներու խնկելի 100 -ամեայ յիշատակին:

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթական 5-էն

Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն եւ Տիրոջ շնորհների հայցով մաղթում նոր յաջողութիւններ՝ ի սէր մեր Հայրենիքի եւ հանուր հայ կեանքի:

Ամենայն բարեաց մաղթանքով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Թող Բարձրեալի հզօր Աջը հովանի լինի Ձեզ, Ձեր ժողովուրդներին եւ երկրներին, պետական այրերին՝ ժողովուրդների բարեկամութեան զօրացման աստուածահաճոյ առաքելութեան մէջ:

Փրկչի Յարութեան հոգնորոգ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդի սիրելու աշխարհի, միասնական մեր աղօթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ պարգեւած փրկութեան հաւատն ու յոյսը բոլոր մարդկանց հետ լինեն, մխիթարեն նեղութիւնների մէջ, զօրացնեն դժուարութիւնների մէջ ու պահպանեն հաստատուն աստուածասէր ճանապարհներին: Թող Տէրն օրհնի մեր ժողովուրդին՝ ընթանալու դէպի խաղաղ ու բարեբեր հանգրուաններ՝ օրհնութեամբ, շնորհով ու ողորմութեամբ լեցուն: Ամուր ու անասան մնանք հաւատքի մէջ եւ անխախտ յոյսի մէջ Աւետարանի, որպէսզի յարուցեալ մեր Տէրը՝ Փրկիչ, ներկայացնի մեզ Բարձրեալ մեր Հօր առաջ անբիծ ու անարատ՝ Աստուծոյ յուսացեալ բոլոր հոգիների հետ:

Փառք ամենազօր Յարութեան Քո, Տէր, այսօր եւ յաւիտեան. ամէն: Քրիստոս յարեաւ ի մեռելոց Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

### ՀԲԸՍ-Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ

Շաբաթական 15-էն

նէական եւ մարդկային ամենազլխաւոր յենարաններ, հայը հայ պահելու մեր ազգային առաքելութեան մէջ:

Հիւրընկալութեան աւարտին, նորանշանակ ատենապետը մէկ առ մէկ ներկայացուց ՀԲԸՍ-ի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային

Յանձնաժողովի նոր վարչականները: Գիշերը յառաջացած էր. իւրաքանչիւր միութենական մեծապէս բաւարարուած վերադարձաւ իր բոյնը, այն հանգիստ խղճով, թէ պտուղը ծառէն հեռու չ'իջնար: Եւ մենք՝ բոլորս, այդ պտուղներն ենք, Բարեգործականի պտուղները: Ապրի՛ք բոլորդ:

Հ.Ա.Ս.

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
**Palm Springs**

Վարձման գներն են՝  
 Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400  
 Long Weekend-ների համար՝ \$ 500  
 Սեկ շաբաթուայ համար՝ \$ 675  
 Սեկ ամսուայ համար՝ \$ 1450

Սանրամասների համար  
 հեռաձայնել՝  
**(818) 246-0125**

**REQUEST FOR PROPOSALS**  
**(RFP #7505)**

Armed and Unarmed Security Guard Services

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing armed and unarmed security guard services. Copy of the RFP may be obtained beginning April 7, 2009 via www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by May 7, 2009.

4/16, 4/23/09  
 CNS-1559222#  
 MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS**  
**(RFP# 7517)**

**PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified, experienced Program/Project Management firms to provide Program/Project Management services to the Authority for the planning, administration and development of its capital asset projects involved in Federal stimulus funding and other capital projects including redevelopment and new development. Copies of the RFP may be obtained beginning April 1, 2009 online at www.hacla.org/ps, or by calling (213) 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., May 1, 2009.

4/9, 4/16/09  
 CNS-1556565#  
 MASSIS WEEKLY

**REQUEST FOR QUALIFICATIONS**  
**(RFQ# 7494)**

**MULTI-DISCIPLINARY ARCHITECTURAL/ENGINEERING AND RELATED SERVICES**

The Housing Authority of the City of Los Angeles is seeking Statements of Qualification from professional services firms interested in providing multi-disciplinary architectural, engineering and related services for on-going planning, architectural, engineering and related consulting services, for the acquisition, planning and development of multi-family residential and mixed use properties. Copies of the RFQ may be obtained beginning April 6, 2009 online at www.hacla.org/ps or by calling (213) 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., Pacific Time, May 6, 2009.

4/16, 4/23/09  
 CNS-1559773#  
 MASSIS WEEKLY

**ՄԱՐԱՂ**



**ԳՈՒՐԳԷՆ ԹԷՅՄՈՒՐԵԱՆ ՏՐԱՆՏԱՔԻ**  
Ծնած՝ Պարսկաստան Ապրիլ 4, 1945

Սրտի դառն կակիծով կը զուժենք մեր սիրելի գաւկիւն, ամուսնոյն, Հօր, մեծ հօր եւ եղբօր՝ հանգուցեալ ԳՈՒՐԳԷՆ ԹԷՅՄՈՒՐԵԱՆ ՏՐԱՆՏԱՔԻի անսպասելի մահը, որ պատահեցաւ Ապրիլ 13, 2009ին Կլենտէյլի մէջ:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ Ապրիլ 17ին առաւօտեան ժամը 9:00ին Hollywood Hills գերեզմանատան Old North եկեղեցւոյ մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068:

Սգակիրներ՝  
Հայրը՝ Մուշեղ Թէյմուրեան  
Այրին՝ Կիւրա Խաչատուրեան  
Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Թենի Քէշիշեաններ եւ զաւակը Քէվըն  
Որդին՝ Թեաի Թէյմուրեան  
եղբայրները՝  
Սուրիկ եւ Հրաչիկ Թէյմուրեան եւ զաւակները, Նայիրի, Նարեկ եւ Նազելի  
Գայանէ եւ Մարդին Պոսահարդ եւ զաւակը Սեւան եւ Ալեքսանտրիա Բուպիտ եւ Կարինէ Թէյմուրեան եւ զաւակները, Սօսէ եւ Սեւան Վիգէն եւ Ալվարդ Թէյմուրեան եւ զաւակները, Սէլին եւ Սինթիա եւ համայն Թէյմուրեան, Խաչատուրեան, Թորոսեան, Խոսրովեան, Դանիէլեան, Զաքարեան, Աբրահամեան, Մնացականեան եւ Յովակիմեան ընտանիքները:  
Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

**ՇՈՒԿԵՆ ԳԻՍ**



ՊԱՐԳԵՒ ՊԻԻԼՊԻԼԵԱՆ

Հանգուցեալ ՊԱՐԳԵՒ ՊԻԻԼՊԻԼԵԱՆի մահուան առաջին տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Ապրիլ, 2009, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Վէն Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406:

Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:  
Սգակիրներ՝  
Այրին՝ Անուշ Պիւպիլեան եւ հարազատները:

**ԲԱՑՈՒԱԾ Է**

Հիպնոսարուծութեան կեդրոն  
դեկավարութեամբ՝  
Փորձառու բժիշկ Արթիմ Սաղրեանի  
Փասատիմայի մէջ  
Ամէն օր՝  
առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ  
կ.ե. ժամը 3:00

Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» բուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
-Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան զերմնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:  
- Մոլութիւններ - սիկարէթ, ալիւ, բմբաղեղեր, եւայլն:  
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհանգստեան, եւայլն:  
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէգ, եղունգի կրծում, եւայլն:  
- Ուսումնական եւ սրտբային բարելաւում

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ-ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ 3ԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ**

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ  
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)  
GLOABCAST SATELLITE  
ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

**ՔԱԶ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:30  
Կլենտէյլի 280-րդ կայանից

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...**

Մեծ ժողովրդականութիւն Վայելող  
Կլենտէյլի AMGA 280-րդ Ալիքը  
Այժմ Կը Սփռուի  
GlobeCast  
Արբանեակային Հեռատեսիլով  
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի  
Ամբողջ Տարածքին  
Դուք Կրնաք Դիտել  
Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ  
Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն  
Մանրամասնութիւններու Համար  
Հեռաձայնել 818.547.9696

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.  
Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,  
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել  
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbeglobal.net

### ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՏՈՒՐՈՒՄ »ՓԻԼԻԿ«Ը ԵՒ »ՄԻԿԱ«Ն ՀԵՐԹԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՏՕՆԵՑԻՆ:

«Միկա»ն սեփական չարկի տակ մրցեց «Արարատ»ի հետ, որը ընթացիկ առաջնութիւնում էր վաստակել ոչ մի միակոր: Այս խաղում եւս «Արարատ»ի խաղացողները պարտութիւն կրեցին զիջելով 0:2 հաշուով: «Միկա»յի կազմում 2 անգամ աչքի ընկաւ կոտորիվուարցի Բոտի Դեբեյը: Վերջինս առաջին կէսում բացեց խաղի հաշիւը, իսկ 2-րդ կէսի սկզբնամասում կրկնապատկեց այն:



Չեմպիոն «Փիլնիկ»ը առաջին հանդիպումը անցկացրեց «Հանրապետական» մարզադաշտում, որտեղ մրցեց «Կիլիկիա»յի հետ: Խաղի բացառապէս ֆաւորիտը «Փիլնիկ»ն էր, սակայն յաղթանակը մեծ դժուարութեամբ տրուեց Վարդան Մինասեանի սաներին: 74-րդ րոպէին Գէորգ Ղազարեանի խփած գոլի շնորհիւ «Փիլնիկ»ը յաղթեց նուազագոյն 1:0 հաշուով:

Առաջին միակորները վաստակելուն մօտ էր Կապանի «Գանձասար»ը, որը սեփական չարկի տակ առաջին կէսից յետոյ 1:0 հաշուով յաղթում էր «Ուլիս»ին: Վերջինս 2-րդ կէսում կարողացաւ 2 անգամ գրաւել կապանցիների դարպասը եւ տօնել կամային յաղթանակ:

Գիւմրիում «Շիրակ»ը 1:2 հաշուով զիջեց «Բանանց»ին: Հիւրերի կազմում առաջին կէսում աչքի ընկան Սամուէլ Մելքոնեանը եւ Էդուարդ Կակոսեանը: 2-րդ կէսում գիւմրեցիներին կարէն խաչատրեանի շնորհիւ յաջողուեց կրճատել հաշուի տարբերութիւնը, սակայն խաղը փրկել «Շիրակ»ին չյաջողուեց:

3-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը 9-ական միակորով գլխաւորում են «Փիլնիկ»ը եւ «Միկա»ն: 6 միակորով լաւագոյն եռեակը եզրափակում են «Բանանց»ը եւ «Ուլիս»ը:

Աւելորդ չէ նշել, որ Հայաստանի ընթացիկ առաջնութիւնում առայժմ որեւէ հանդիպում ոչ-ոքիով չի աւարտուել:

#### Մրցաշարային աղիւսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փիլնիկ	3	3	0	0	5-0	9
2. Միկա	3	3	0	0	7-2	9
3. Բանանց	3	2	0	1	3-2	6
4. Ուլիս	3	2	0	1	3-4	6
5. Կիլիկիա	3	1	0	2	2-2	3
6. Շիրակ	3	1	0	2	4-5	3
7. Արարատ	3	0	0	3	0-5	0
8. Գանձասար	3	0	0	3	1-5	0

### ՆԱԶԻԿ ԱՐԴԱԼԵԱՆԸ ԵՒ ՀՈՒՓՍԻՍԵ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆԸ ԾԱՆՐԱՍԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ԳՐԱԲԵՑ 2-ՐԴ ՏԵՂԸ

Ապրիլի 12-ին Բուխարեստում աւարտուեց Եւրոպայի ծանրամարտի առաջնութիւնը: Կանանց 75 կգ քաշայինների մրցակէտում Հռիփսիմէ խուրշուղեանը (Քասախ) երկամարտի 253 կգ արդիւնքով գրաւեց 2-րդ տեղը եւ արժանացաւ արծաթէ մետալի: Նա պոկում վարժութիւնում ցոյց տուեց 116 կգ (փոքր արծաթ), իսկ հրումում՝ 137 կգ (փոքր պրոնզ) արդիւնքը:



Նազիկ Աւդալեան

Սպասելիքներն արդարացրեց Նազիկ Աւդալեանը (69 կգ, Գիւմրի): Նա պոկեց 110 կգ, հրեց 135 կգ եւ երկամարտի 245 կգ արդիւնքով գրաւեց 2-րդ տեղը: Ն. Աւդալեանն իր հետ տուն կը բերի 3 արծաթէ մետալ:

Մելինէ Դալուզեանը (63 կգ, Գիւմրի) պոկում վարժութիւնում ցոյց տուեց 100 կգ, հրումում՝ 128 կգ արդիւնք, եւ երկամարտի 228 կգ ցուցանիշով գրաւեց 4-րդ տեղը:



Հռիփսիմէ խուրշուղեան

Տղամարդկանց մրցումներում Ապրիլի 9-ին ելույթ ունեցան 85 կգ քաշայինները: Հայաստանի մարզիկներ Արամ Անդրիկեանը (Սեւան) եւ Գէորգ Պողոսեանը (Սամաղար) իրենց հնարաւորութիւններից թող չհանդէս եկան եւ անմասն մնացին խաղարկուած պարգեւներից:

Արթուր Բաբայեանը (105 կգ, Վանաձոր) եզրափակեց առաջին 7-եակը, իսկ գերծանր քաշային 18-ամեայ Ռուբէն Ալեքսանեանը (Արարատ) 1-ին վարժութեան ժամանակ վնասուածք ստացաւ եւ դուրս մնաց յետագայ պայքարից:

Եւրոպական ստուգատեսում Հայաստանի ծանրորդները նուաճեցին 10 մետալ (2 ոսկէ, 6 արծաթէ, 2 պրոնզէ): Տղամարդկանց հաւաքականը գրաւեց 5-րդ, իսկ կանանցը՝ 6-րդ տեղը:

Առաքել Միրզոյեանը, նուաճելով ախոյեանի կոչումը, ճանաչուեց նաեւ առաջնութեան լաւագոյն ծանրորդ:

### ԱՓՐԻԿԵ 2010 ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԿԸ ՍԿՍԻ 410 ՕՐԵՆ

#### ՀԱՄԱԴՐԵՑ ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

Ապրիլի 2010ը ֆութպոլի աշխարհի ախոյեանութեան մրցաշարքի դասաւորման գտումի մրցումները շարունակուեցան: Եւրոպայի ցամաքամասէն Սպանիա, Հոլանտա, Անգլիա եւ Գերմանիա շատ յաջող ընթացքի մէջ են եւ իրար յաջորդ յաղթանակներ արձանագրեցին թուրքիոյ դէմ: Անմխիթար վիճակի մէջ կը գտնուի Հայաստանը: Մեր ազգային հաւաքականը հաւասար դուրս եկաւ էսթոնիայի դէմ (2-2) Երեւանի մէջ եւ պարտուեցաւ թալիներ մէջ (0-1): Մարզիչ Եան Բաուլսէն ազատ արձակուեցաւ իր պաշտօնէն եւ այդ դերը կը վստահուի «Փիլնիկ»ի գլխաւոր մարզիչ Վարդան Մինասեանին:



Թացքի մէջ է: Արձանագրեց երկու յաղթանակ ու մէկ հաւասարութիւն: Նեղ կացութեան մէջ կը գտնուի Մէքսիքոյի խումբը, որ կորսնցուց երկու խաղերը Ա.Մ. Նահանգներու եւ Հոնոլուլուի դէմ: Հաւաքականի շուէտացի մարզիչ էրիքսըն ազատ արձակուեցաւ իր պաշտօնէն:

Հարաւային Ամերիկայի մէջ մեծ անակնկալ մը եղաւ Պոլիվիայի յաղթանակը Արժանթինի դէմ 6-1: Մարզիչ Տիեկօ Մարատոնա ըսաւ. «Իւրաքանչիւր կողմ կարծես դաշտի մը կը մխրճէր սրտիս»: Չորս օր առաջ Արժանթին կը յաղթէր Վէնեզուելային 4-0: Մոնտիալին կը մօտենան Փարակուէյ, Պրագիլ եւ Չիլի:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու հաւաքականը լաւ ըն-

մը հաւասարութեան պարագային դիմել փենալթիներու գործադրութեան, որ դարձաւ օրէնք: 1982ի մոնտիալին Գերմանիա փենալթիներով դուրս ձգեց Ֆրանսայի եւ հասաւ ֆինալի իտալիոյ դէմ: Փենալթի մը շեղել իր կիզակէտէն ուշագրաւ ձախողութիւն մըն է ֆութպոլիստի մը համար: Ֆուլթոնի պատմութեան մէջ չիշատակելի կը մնայ Ռոպերթ Պաճիոն որ 1994ին Մոնտիալին, գնդակը դուրս քաշեց 11 մեթրէն եւ Պրագիլ փենալթիներով յաղթեց իտալիոյ եւ դարձաւ աշխարհի ախոյեան: 1999ին Հարաւային Ամերիկայի ախոյեանութեան մրցաշարքին արժանթինցի անուանի ֆութպոլիստ խումբի ռմբարկու Մարթին Փալերմօ ձախողեցաւ երեք անգամ գնդակը գետեղել Գոլոմպիացի բերդէն ներս եւ Արժանթին պարտուեցաւ 0-3 արդիւնքով:

### Ո՞Վ ՄՏԱՅՂԱՅԱԻ ՓԵՆԱԼԹԻՆ

#### ՀԱՄԱԴՐԵՑ ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

118 տարիներու պատմութիւն ունի փենալթիի տուգանքը եւ մտայղացումն է իր լայնացի բերդապահ William McCrum-ի: Ան բազմից ակնատես կը դառնար խարդախութիւններու եւ ֆութպոլիստներու, որ բերդին մօտիկ ձեռքով կը կեցնէին գնդակը: Իրաւարարը պարզապէս ազատ հարուած մը կը նշանակէր: Օր մը, ան յղացաւ փենալթի քաշելու գաղափարը: Հակառակ անոր, որ այդ մէկը կրնար վնաս հասցնել հեղինակին, բայց իր առաջադրանքը ներկայացուց պատկամ մարմիններուն:

Փենալթիի գաղափարը հեշտ չեկաւ անգլիացիներուն, որոնք հնարած էին ֆութպոլի խաղը, բայց յետագային համոզուեցան որ արդար է անոր գործադրութիւնը եւ վերջապէս 2 Յունիս 1891ին փենալթիին վաւերացուեցաւ Կլասկով քաղաքին մէջ:

Մինչեւ 1962 երբ խաղերը հաւասար կը վերջանային վիճակ կը ձգուէր խումբերու միջեւ եւ ըստ բախտի կ'որոշուէր յաղթողը: Սպանացի Ռաֆայէլ Պաթէսթէր առաջարկեց, որ իւրաքանչիւր կողմէ քաշէ 5 փենալթիներ եւ ընդունուեցաւ:

Այդ թէեւ վերոյիշեալ իր լայնացի բերդապահը յղացաւ փենալթիի գաղափարը, բայց պաւարացի իրաւարար Karl Wald 1970ին աւելի միջազգայնացուց մրցումի

մը հաւասարութեան պարագային դիմել փենալթիներու գործադրութեան, որ դարձաւ օրէնք: 1982ի մոնտիալին Գերմանիա փենալթիներով դուրս ձգեց Ֆրանսայի եւ հասաւ ֆինալի իտալիոյ դէմ: Փենալթի մը շեղել իր կիզակէտէն ուշագրաւ ձախողութիւն մըն է ֆութպոլիստի մը համար: Ֆուլթոնի պատմութեան մէջ չիշատակելի կը մնայ Ռոպերթ Պաճիոն որ 1994ին Մոնտիալին, գնդակը դուրս քաշեց 11 մեթրէն եւ Պրագիլ փենալթիներով յաղթեց իտալիոյ եւ դարձաւ աշխարհի ախոյեան: 1999ին Հարաւային Ամերիկայի ախոյեանութեան մրցաշարքին արժանթինցի անուանի ֆութպոլիստ խումբի ռմբարկու Մարթին Փալերմօ ձախողեցաւ երեք անգամ գնդակը գետեղել Գոլոմպիացի բերդէն ներս եւ Արժանթին պարտուեցաւ 0-3 արդիւնքով:

Ամէն պարագայի բերդապահի մը այս յեղափոխական մտայղացումը շատ անգամ տեղի տուած է վիճելի փենալթիներու, նայած իրաւարարներու հայցցողութեան: 1990ին Գերմանիա շատ կասկածելի փենալթիով յաղթեց Արժանթինին 1-0 եւ դարձաւ աշխարհի ախոյեան: Ներկայիս, մրցումներու կրկնապատկերները (replay) ցոյց կու տան ամենամեծ տուգանքի արդարացիութիւնը: Բայց իտալիացի իրաւարար Karl Wald 1970ին աւելի միջազգայնացուց մրցումի

մը հաւասարութեան պարագային դիմել փենալթիներու գործադրութեան, որ դարձաւ օրէնք: 1982ի մոնտիալին Գերմանիա փենալթիներով դուրս ձգեց Ֆրանսայի եւ հասաւ ֆինալի իտալիոյ դէմ: Փենալթի մը շեղել իր կիզակէտէն ուշագրաւ ձախողութիւն մըն է ֆութպոլիստի մը համար: Ֆուլթոնի պատմութեան մէջ չիշատակելի կը մնայ Ռոպերթ Պաճիոն որ 1994ին Մոնտիալին, գնդակը դուրս քաշեց 11 մեթրէն եւ Պրագիլ փենալթիներով յաղթեց իտալիոյ եւ դարձաւ աշխարհի ախոյեան: 1999ին Հարաւային Ամերիկայի ախոյեանութեան մրցաշարքին արժանթինցի անուանի ֆութպոլիստ խումբի ռմբարկու Մարթին Փալերմօ ձախողեցաւ երեք անգամ գնդակը գետեղել Գոլոմպիացի բերդէն ներս եւ Արժանթին պարտուեցաւ 0-3 արդիւնքով:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
 (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA  
 ՀԵՌԱՉԱՅՆԵԼ  
 (626) 797-7680